Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային բանկի միջև 2019 թվականի նոյեմբերի 27-ին և դեկտեմբերի 4-ին ստորագրված «Հայաստանի ճանապարհային անվտանգության բարելավման ծրագիր» Հարևանության ներդրումային գործիքի ներդրումային դրամաշնորհային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

FI թիվ 91.498

Serapis թիվ 2011-0566

*ԵՆԲ-ի ներքին դասակարգման աստիճանը՝*
*կորպորատիվ օգտագործման համար*

ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

*և*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ

*միջև՝*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ**

*Վերաբերյալ*

Լյուքսեմբուրգ, 4.12.2019թ.

Երևան, 27.11.2019թ.

**Բովանդակություն**

ՀՈԴՎԱԾ 1. Սահմանումներ և մեկնաբանություն ..... 7

ՀՈԴՎԱԾ 2. Առարկա ..... 25

ՀՈԴՎԱԾ 3. Ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը ..... 27

ՀՈԴՎԱԾ 4. Աշխատանքների ֆինանսավորումը ..... 27

ՀՈԴՎԱԾ 5. Նախագծումը և գնումները ..... 28

ՀՈԴՎԱԾ 6. Պայմանագրերի փոփոխումը ..... 28

ՀՈԴՎԱԾ 7. Դրամաշնորհի վճարումը ..... 30

ՀՈԴՎԱԾ 8. Թույլատրելի ծախսերը ..... 36

ՀՈԴՎԱԾ 9. Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը ..... 40

ՀՈԴՎԱԾ 10. Արդյունքների նկատմամբ իրավունքները և մտավոր սեփականության իրավունքները ..... 45

ՀՈԴՎԱԾ 11. Տեսանելիությունը և թափանցիկությունը ..... 47

ՀՈԴՎԱԾ 12. Շահերի բախումը ..... 50

ՀՈԴՎԱԾ 13. Գաղտնիությունը ..... 50

ՀՈԴՎԱԾ 14. Գնահատումը ..... 52

ՀՈԴՎԱԾ 15. Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները ..... 53

ՀՈԴՎԱԾ 16. Անձնական տվյալների պաշտպանությունը ..... 55

ՀՈԴՎԱԾ 17. Բարեվարքության հանձնառությունը ..... 55

ՀՈԴՎԱԾ 18. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ..... 57

ՀՈԴՎԱԾ 19. Կասեցումը ..... 58

ՀՈԴՎԱԾ 20. Հետ գանձումը ..... 59

ՀՈԴՎԱԾ 21. Փոփոխությունները .....61

ՀՈԴՎԱԾ 22. Իրավունքների շնորհումը .....61

ՀՈԴՎԱԾ 23. Դադարեցումը ..... 62

ՀՈԴՎԱԾ 24. Գանձումները և ծախսերը ..... 64

ՀՈԴՎԱԾ 25. Պատասխանատվությունը և Փոխհատուցումը ..... 64

ՀՈԴՎԱԾ 26. Ծանուցումները և այլ հաղորդակցություն..... 66

ՀՈԴՎԱԾ 27. Կարգավորող օրենքը և վեճերի կարգավորումը ..... 68

ՀՈԴՎԱԾ 28. Իրավունքները պահպանելը ..... 69

ՀՈԴՎԱԾ 29. Ամբողջական Համաձայնագիրը ..... 69

ՀՈԴՎԱԾ 30. Անվավեր ճանաչելը..... 69

Հավելված 1. Ծրագրի նկարագրությունը .....72

Հավելված 2. Աշխատանքների գնահատված ծախսերը .....81

Հավելված 3. Ֆինանսական նույնականացման ձև ..... 84

Հավելված 4. Վճարման պահանջագրի օրինակելի ձև ..... 86

Հավելված 5. Հաշվետվությունները .....88

ՍՈՒՅՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ **ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**) ԿՆՔՎԵԼ Է՝

Մի կողմից՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ,
ի դեմս Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ **Դրամաշնորհի շահառու**),

ներկայացված՝

և մյուս կողմից՝

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ (այսուհետ՝ **Բանկ**),

Որի տեղակայման հասցեն է 98-100 կոնրադ Ադենաուերի բուլվար, L-2950 Լյուքսեմբուրգ

Ներկայացված՝

միջև

Այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ **Կողմ**, իսկ միասին՝ **Կողմեր**.

**ՔԱՆԻ ՈՐ՝**

Ա. Դրամաշնորհի շահառուն, հայտարարել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ **Շահագործող**), միջոցով ձեռնարկում է՝ (i) Մ6 ճանապարհի և (ii) երկրի մի քանի այլ ճանապարհների (հատկապես՝ Մ5, Մ4 և Մ2 ճանապարհների, որոնցով երթևեկությունը ծանրաբեռնված է) ֆիզիկական բարելավման աշխատանքների, ինչպես նաև «փափուկ միջոցների» միջոցով ճանապարհային տրանսպորտի հետ կապված պատահարների, վնասվածքների և մահվան դեպքերի ցուցանիշների նվազեցմանն ուղղված նախագիծ՝ 1-ին հավելվածով *(Ծրագրի նկարագրությունը)* տրված նկարագրությանը համապատասխան (այսուհետ՝ **Ծրագիր**):

Բ. 2016 թվականի հունվարի 26-ի և 2016 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Մ6 միջպետական ճանապարհի ֆինանսավորման պայմանագրով» (այսուհետ՝ **Ֆինանսավորման պայմանագիր**) Բանկը Դրամաշնորհի շահառուին տրամադրել է 51 000 000 EUR (հիսունմեկ միլիոն եվրո) չափով վարկ՝ ի թիվս այլ նպատակների՝ Ծրագիրը և Մ6 միջպետական ճանապարհի՝ Հայաստանի կենտրոնում գտնվող Վանաձոր քաղաքի և Հայաստանի ու Վրաստանի հյուսիս-արևելյան սահմանի մոտ գտնվող Բագրատաշենի միջև ընկած՝ մոտ 90 կիլոմետր երկարությամբ հատվածի վերականգնումն ու բարելավումը ֆինանսավորելու համար: Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ) Դրամաշնորհի շահառուին տրամադրել է 44 037 000 EUR (քառասուն չորս միլիոն երեսուն յոթ հազար եվրո) չափով վարկ՝ Մ6 միջպետական ճանապարհի վերականգնումն ու բարելավումը համաֆինանսավորելու համար

Գ. Ծրագրի հետ կապված՝ Դրամաշնորհի շահառուն դիմել է Բանկին՝ Ծրագրի ծախսերի մի մասը ծածկելու համար փոխհատուցման ոչ ենթակա հիմքով ֆինանսավորում ստանալու հարցում աջակցելու խնդրանքով:

Դ. Բանկի դիմումով Եվրոպական հանձնաժողովը համաձայնել է մասնակիորեն ֆինանսավորել Ծրագիրը առավելագույնը մինչև 4 250 000 EUR (չորս միլիոն երկու հարյուր հիսուն հազար եվրո) համարժեք գումարի (այսուհետ՝ **Դրամաշնորհ**) չափով՝ Հարևանության ներդրումային ծրագրի (այսուհետ՝ **ՀՆԾ**) շրջանակներում, որը ֆինանսավորման գործիք է՝ ստեղծված 2014 թվականին Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ Եվրոպայի հանրային ֆինանսական հաստատությունների, այդ թվում՝ Բանկի կողմից փոխհատուցման ենթակա հիմքով տրամադրված ֆինանսավորմանը զուգահեռ Եվրոպական միության ընդհանուր բյուջեից փոխհատուցման ոչ ենթակա հիմքով ֆինանսավորում տրամադրելու միջոցով Եվրոպական միության՝ ԵՄ հարևանությամբ գտնվող գործընկեր երկրներին աջակցելու համար՝ փոխառու միջոցների ներգրավման էֆեկտը բավարար չափով ապահովելու նպատակով: Ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով Եվրոպական հանձնաժողովը նաև համաձայնել է տրամադրել (i) առավելագույնը մինչև 650 000 EUR (վեց հարյուր հիսուն հազար եվրո) համարժեք տեխնիկական աջակցության դրամաշնորհ գումարով, (ii) հաղորդակցության բաղադրիչ առավելագույնը մինչև 200 000 EUR (երկու հարյուր հազար եվրո) համարժեք գումարի չափով, և (iii) գնահատման աուդիտի բաղադրիչ առավելագույնը մինչև 50 000 EUR (հիսուն հազար եվրո) համարժեք գումարի չափով:

Ե. 2017 թվականի դեկտեմբերի 21-ին Բանկը և Եվրոպական միությունը, ի դեմս Եվրոպական հանձնաժողովի, կնքել են (ի թիվս այլոց) Դրամաշնորհի կառավարման և իրականացման համար պատվիրակման համաձայնագիր (այսուհետ՝ **Պատվիրակման համաձայնագիր**):

ՀԵՏԵՎԱԲԱՐ, սույնով համաձայնություն է ձեռք բերվել հետևյալի շուրջ.

## ՀՈԴՎԱԾ 1. Սահմանումներն ու մեկնաբանություն

1.1. Սույն Համաձայնագրում ցանկացած տեղ գործածվելիս հետևյալ եզրույթներն ունեն հետևյալ նշանակությունները՝

| | |
|---|---|
| «ԱԶԲ» | նշանակում է Ասիական զարգացման բանկ: |
| «Համաձայնագիր» | նշանակում է սույն՝ Ներդրումային դրամաշնորհի համաձայնագիրը: |
| «Բանկի բնապահպանական և սոցիալական չափանիշներ» | նշանակում է՝ (i) «Բնապահպանական և սոցիալական սկզբունքների ու չափանիշների մասին» ԵՆԲ-ի հայտարարությունը, և (ii) «Բնապահպանական և սոցիալական գործելակերպերի մասին» ԵՆԲ-ի ձեռնարկի I հատորում պարունակվող՝ ԵՆԲ-ի բնապահպանական և սոցիալական չափանիշները՝ այնպես, ինչպես հրապարակված են Բանկի կայքէջում, և այն փոփոխություններով կամ թարմացումներով, որոնք կարող են կատարվել ժամանակ առ ժամանակ: Կասկածներից զերծ մնալու համար՝ Բանկի բնապահպանական և սոցիալական չափանիշները ներառում են հղումներ Հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիային և աշխատանքային իրավունքներին և համարվում են մարդու իրավունքներին համապատասխանող պատշաճ շրջահայացության կարգավորիչ շրջանակ: |
| «Բանկի գնումների ուղեցույց» | նշանակում է Բանկի կայքէջում հրապարակված Գնումների ուղեցույցը (ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով կամ թարմացումներով հանդերձ), որը Բանկի կողմից ամբողջությամբ կամ |

մասամբ ֆինանսավորվող ծրագրերի կազմակերպիչների համար տեղեկություններ է պարունակում այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկել Ծրագրի համար պահանջվող աշխատանքներ, ապրանքներ և ծառայություններ գնելու համար: Բանկի գնումների ուղեցույցում նկարագրվում են այն կանոնները, որոնք Կազմակերպիչը պետք է կիրառի Դրամաշնորհով ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող աշխատանքներ և ծառայություններ գնելիս:

| | |
|---|---|
| «Կիրարկման ընդհանուր կանոնակարգ» | նշանակում է Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի մարտի 11-ի՝ Արտաքին միջոցառումների ֆինանսավորման վերաբերյալ Միության գործիքների կիրարկման ընդհանուր կանոններն ու ընթացակարգերը սահմանող թիվ 236/2014 (ԵՄ) կանոնակարգը (OJ L77, 15.03.2014, էջ 95)՝ այն փոփոխություններով, լրացումներով կամ ձեւափոխություններով հանդերձ, որոնք կարող են կատարվել ժամանակ առ ժամանակ: |
| «Գաղտնի տեղեկատվություն» | նշանակում է ցանկացած փաստաթուղթ, տեղեկատվություն կամ այլ նյութ, որը տրամադրվում է սույն Համաձայնագրի հետ կապված կամ դրան համաձայն, և, որը հավաքականորեն, գրավոր կամ որևէ այլ մշտական (այդ թվում՝ էլեկտրոնային) կրիչի վրա ամրագրված ձևով և հստակ ու ակնհայտորեն սահմանվում է որպես «Գաղտնի տեղեկատվություն»: |
| «Պայմանագիր» | նշանակում է Դրամաշնորհի շահառուի և կապալառուի միջև պետական գնումների ընթացակարգի համաձայն |

| | |
|---|---|
| | կնքված համաձայնագիր՝ 5-րդ հոդվածով *(Նախագծումը և գնումները)* սահմանված կարգով, և որի համաձայն այդ Կապալառուն կատարում է Աշխատանքները: |
| «Կապալառու» | նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ այդպիսի անձանց միավորում՝ պաշտոնական կամ ոչ պաշտոնական, որի հետ Շահառուն Պայմանագիր է կնքում Աշխատանքները կատարելու համար: |
| «Փոխարկում» | նշանակում է Դրամաշնորհից կատարված կամ վճարման ենթակա ցանկացած գումարի առնչությամբ կա՛մ մեկ արժույթով գումարի գնում մեկ այլ արժույթով գումարի վաճառքի դիմաց, կա՛մ մեկ այլ արժույթով արտահայտված գումարին համարժեք արժույթի հաշվարկը Տարադրամի փոխարժեքով (սահմանված է ստորև)՝ Բանկի կամ ցանկացած այլ երրորդ կողմի կողմից, ինչպիսիք են Դրամաշնորհի շահառուն, Կազմակերպիչը, Կապալառուները կամ Բանկի կողմից հաղորդակցության կամ հատուկ աուդիտների նպատակով հանձնարարություն ստացած ցանկացած այլ երրորդ կողմ: |
| «Զարգացման համագործակցության գործիք» | նշանակում է Եվրոպական հարևանության գործիք (OJ L77, 15.3.2014, էջ 27) սահմանող՝ Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2014 թվականի մարտի 11-ի թիվ 232/2014 (ԵՄ) կանոնակարգով սահմանված ֆինանսավորման գործիքը՝ այն փոփոխություններով, լրացումներով կամ ձևափոխություններով հանդերձ, որոնք կարող են կատարվել ժամանակ առ ժամանակ: |
| «Պատվիրակման | եզրույթն ունի նախաբանի «Ե» կետում դրան տրված |

| | |
|---|---|
| համաձայնագիր» | իմաստը: |
| «Ուժի մեջ մտնելու օր» | նշանակում է այն ամսաթիվը, որը հաստատվում է Բանկի կողմից Դրամաշնորհի շահառուին ուղարկած այն գրությամբ, որով հաստատվում է, որ Բանկը ստացել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից անգլերեն լեզվով տրված իրավաբանական եզրակացությունը՝ Դրամաշնորհի շահառուի կողմից սույն Համաձայնագիրը պատշաճ կերպով կնքելու և դրա վավերականության, կիրարկելիության և պարտադիր բնույթի վերաբերյալ՝ ուղեկցված բոլոր համապատասխան փաստաթղթերով, որոնցով հավաստվում է Դրամաշնորհի շահառուի՝ սույն Համաձայնագիրը կնքելու լիազորությունը, ինչպես նաև սույն Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետությունում կիրառելի օրենքների համաձայն պատշաճ կերպով Նախագահի կողմից հաստատված լինելու ապացույցներ: Այդպիսի գրությունը սպառիչ ապացույց է առ այն, որ սույն Համաձայնագիրը մտել է ուժի մեջ: |
| «Ավարտի օր» | նշանակում է այն օրը, երբ հաստատվում է Դրամաշնորհի վերջնական արժեքը, և վճարվում է Դրամաշնորհի մնացորդը (որը կարող է լինել Բանկի կողմից Դրամաշնորհի վերջնական արժեքից ավելի վճարված գումարները հետ գանձելու ձևով), և, որը ոչ մի դեպքում Կատարման ժամկետի ավարտից ուշ չէ: |
| «եվրո» | նշանակում է Եվրոպական միության այն անդամ |

| | |
|---|---|
| | պետությունների օրինական արժույթը, որոնք այն ընդունում կամ ընդունել են որպես իրենց արժույթ՝ «Եվրոպական միության մասին» պայմանագրի և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի կամ դրանց հաջորդող պայմանագրերի համապատասխան դրույթների համաձայն: |
| «Ֆինանսավորման պայմանագիր» | եզրույթն ունի նախաբանի «Բ» կետում դրան տրված իմաստը: |
| «Ֆինանսական նույնականացման ձև» | նշանակում է 3-րդ Հավելվածում *(Ֆինանսական նույնականացման ձև)* նշված ձևին համապատասխան՝ Դրամաշնորհի շահառուի կողմից տրված փաստաթուղթ, որով նույնականացվում է Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարը: |
| «Ահաբեկչության ֆինանսավորում» | նշանակում է միջոցների տրամադրում կամ հավաքում ցանկացած եղանակով, ուղղակի կամ անուղղակի՝ այն մտադրությամբ, որ դրանք պետք է օգտագործվեն, կամ իմացությամբ, որ դրանք օգտագործվելու են ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ԵՄ խորհրդի՝ ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ 2002 թվականի հունիսի 13-ի 2002/475/JHA շրջանակային որոշման 1-4-րդ հոդվածների իմաստով ցանկացած իրավախախտում կատարելու նպատակով: |
| «Անհաղթահարելի ուժ» | նշանակում է Կողմերի վերահսկողությունից վեր գտնվող ցանկացած անկանխատեսելի բացառիկ իրավիճակ կամ իրադարձություն, որը նրանց կամ նրանց գործակալների, աշխատակիցների կամ կապալառուների կողմից թույլ տրված սխալի կամ |

անփութության հետևանք չէ, ապացուցվում է, որ անհաղթահարելի է՝ չնայած պատշաճ շրջահայացության բոլոր միջոցառումներին, և կանխում է նրանցից ցանկացած մեկի կողմից իր որևէ պայմանագրային պարտականության կատարումը: Սարքավորումների կամ նյութերի թերությունները կամ դրանց հասանելիության հետ կապված ուշացումները, աշխատանքային վեճերը, գործադուլները կամ ֆինանսական դժվարությունները չեն կարող վկայակոչվել որպես Անհաղթահարելի ուժ:

«Տարադրամի փոխարժեք» նշանակում է (i) բացառապես Դրամաշնորհի շահառուի կամ Շահագործողի կողմից Փոխարկման նպատակներից ելնելով և սույն Համաձայնագրի հոդված 7-րդ հոդվածի 7-րդ կետի բ ենթակետի նպատակներից ելնելով՝ տարադրամի համար սահմանված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական փոխարժեք, որը կիրառելի է համապատասխան վճարման կամ հանձնառության ամսաթվին, կամ (ii) եթե նման փոխարժեքը հասանելի չէ և բոլոր այլ նպատակներից ելնելով՝ այն փոխարժեքը, որը Ֆրանկֆուրտում Եվրոպական կենտրոնական բանկի կողմից հրապարակվել է համապատասխան վճարումը կատարելուց կամ կատարման ենթակա դառնալուց առաջ՝ 30-րդ օրը, կամ, եթե այդպիսի փոխարժեքը համապատասխան պահին հասանելի չէ կամ այլևս հասանելի չէ, այդպիսի փոխարժեքին փոխարինող ցանկացած փոխարժեք, ինչպիսին է Բանկի կամ

համապատասխան երրորդ կողմի (որը կարող է որոշվել բացառապես Բանկի կողմից) կողմից ողջամիտ առևտրային եղանակով որոշված փոխարժեքը, որը կարող է ներառել արտարժույթի փոխարժեքի գործող սահմանում այդպիսի փոխարկման համապատասխան օրվա դրությամբ, որը փոխարկում կատարող սուբյեկտի կողմից ձեռք է բերվում անկախ առաջատար դիլերից՝ վերջինիս կողմից բարեխղճորեն և ողջամիտ առևտրային եղանակով ընտրված համապատասխան արժույթով:

| | |
|---|---|
| «Փոխարկման ծախս» | նշանակում է ցանկացած ծախս և/կամ կորուստ, որն առաջանում է համապատասխան Տարադրամի փոխարժեքով կատարված ցանկացած Փոխարկումից: |
| «Փոխարկումից ստացվող շահույթ» | նշանակում է ցանկացած շահույթ և/կամ եկամուտ, որն առաջանում է համապատասխան Տարադրամի փոխարժեքով կատարված ցանկացած Փոխարկումից: |
| «Դրամաշնորհ» | եզրույթն ունի Նախաբանի «Դ» կետում դրան տրված իմաստը: |
| «Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամար» | նշանակում է Դրամաշնորհի շահառուի՝ եվրոյով հաշվեհամարը, որին պետք է կատարվեն Դրամաշնորհի շրջանակներում կատարվող հատկացումները: Դրամաշնորհի հատկացման հաշիվը պետք է լինի Դրամաշնորհի շահառուի միասնական գանձապետական հաշվեհամարի առանձին ենթահաշիվ: Դրամաշնորհի շահառուի նմանատիպ գանձապետական միասնական հաշիվը պետք է պահվի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական |

բանկում: Դրամաշնորհի հատկացման հաշիվը պետք է առանձնացվի Դրամաշնորհի շահառուի մյուս բոլոր ակտիվներից և այս հաշիվը պետք է օգտագործվի միայն Ծրագրի իրականացման համար (Ծրագրի իրականացման հետ կապված Դրամաշնորհի միջոցների ստացում և փոխանցումների կատարում): Բանկը Դրամաշնորհի միջոցները փոխանցում է Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարին՝ սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան: Դրամաշնորհի շահառուն, ի դեմս Ֆինանսների նախարարության, համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքների, կարգավորումների և ընթացակարգերի, Դրամաշնորհի միջոցները Շահագործողի հիմնավորված պահանջով Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարից փոխանցում է Դրամաշնորհի Շահառուի հաշվեհամարին:

Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարը անտոկոս է: Կառավարման վճարներ չեն պահվի այն գումարներից, որոնք փոխանցվել են Դրամաշնորհի շահառուի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարից կամ Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարին: Չնայած դրան՝ Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարից կառավարման կամ դրանցից փոխանցում կատարելու կապակցությամբ հնարավոր բոլոր բանկային ծախսերը կրում է Դրամաշնորհի շահառուն: Դրամաշնորհի

առնչությամբ և Պայմանագրերը կատարելու նպատակով Դրամաշնորհի շահառուն կարող է իրականացնել Դրամաշնորհի շրջանակներում ցանկացած գումարի Փոխարկում: Կասկածներից զերծ մնալու համար՝ Դրամաշնորհի շահառուին անհիմն վճարված կամ նրա կողմից չօգտագործված կամ ոչ նպատակային օգտագործված և Բանկին ետ փոխանցված ցանկացած գումար պետք է արտահայտվի եվրոյով և հավասար լինի Բանկի կողմից Դրամաշնորհի շահառուին սկզբնապես վճարած՝ եվրոյով արտահայտված համապատասխան գումարին:

«Դրամաշնորհի Շահագործողի հաշվեհամար» նշանակում է Շահագործողի անվամբ բացված՝ եվրոյով հաշվեհամարը: Դրամաշնորհի Շահագործողի հաշվեհամարը պետք է լինի Դրամաշնորհի շահառուի միասնական գանձապետական հաշվեհամարի առանձին ենթահաշիվ: Միասնական գանձապետական նմանատիպ հաշվեհամարը պետք է վարվի Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում: Դրամաշնորհի շահագործողի հաշիվը պետք է առանձնացվի Դրամաշնորհի շահառուի և շահագործողի մյուս բոլոր ակտիվներից, և այս հաշիվը պետք է օգտագործվի միայն Ծրագրի իրականացման համար (Ծրագրի իրականացման հետ կապված Դրամաշնորհի միջոցների ստացում և փոխանցումների կատարում):

Շահագործողը պետք է վճարումներ կատարի Կապալառուներին Դրամաշնորհի շահագործողի հաշվից (կամ իր ցանկացած ենթահաշիվներից)՝ սույն

Համաձայնագրում նշված պայմաններին և պահանջներին համապատասխան:

Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարը անտոկոս է: Կառավարման վճարներ չեն պահվի այն գումարներից, որոնք փոխանցվել են Դրամաշնորհի շահառուի կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարից կամ Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարին: Չնայած դրան՝ Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարից կառավարման կամ դրանցից փոխանցում կատարելու կապակցությամբ հնարավոր բոլոր բանկային ծախսերը կրում է Դրամաշնորհի շահառուն:

Դրամաշնորհի առնչությամբ և Պայմանագրերը կատարելու նպատակով Դրամաշնորհի շահառուն կարող է իրականացնել Դրամաշնորհի շրջանակներում ցանկացած գումարի Փոխարկում: Կասկածներից զերծ մնալու համար՝ Դրամաշնորհի շահառուին անհիմն վճարված կամ նրա կողմից չօգտագործված կամ ոչ նպատակային օգտագործված և Բանկին ետ փոխանցված ցանկացած գումար պետք է արտահայտվի եվրոյով և հավասար լինի Բանկի կողմից Դրամաշնորհի շահառուին սկզբնապես վճարած՝ եվրոյով արտահայտված համապատասխան գումարին:

«Գնումների ուղեցույց» նշանակում է Գնումների ուղեցույցը՝ ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով կամ թարմացումներով հանդերձ՝ հրապարակված Բանկի

կայքէջում՝ հետևյալ հասցեով՝ https://www.eib.org/en/publications/guide-to-procurement.htm, և, որը Բանկի կողմից ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող ծրագրերի շահագործողների համար տեղեկություններ է պարունակում այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկել Ծրագրի համար պահանջվող աշխատանքներ, ապրանքներ և ծառայություններ գնելու համար: Գնումների ուղեցույցում նկարագրվում են այն կանոնները, որոնք Դրամաշնորհի Շահագործողը պետք է կիրառի Դրամաշնորհով ամբողջությամբ կամ մասամբ ֆինանսավորվող աշխատանքներ և ծառայություններ գնելիս:

| | |
|---|---|
| «Մտավոր սեփականության իրավունքներ» | նշանակում է ցանկացած հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ, իրավունքներ նմուշների, տվյալների շտեմարանների, համակարգչային ծրագրերի, դոմենային անվանումների, ապրանքային նշանների, ծառայությունների նշանների, արտոնագրերի, առևտրային անվանումների նկատմամբ կամ վերոնշյալներից որևէ մեկը ստանալու համար ցանկացած դիմում, իրավունքներ գաղտնի տեղեկատվության ոլորտում (այդ թվում՝ «նոու-հաու» եւ առևտրային գաղտնիքներ) կամ նմանատիպ իրավունքներ կամ պարտականություններ, բարոյական իրավունքներ՝ յուրաքանչյուր դեպքում՝ գրանցված կամ չգրանցված և ներառյալ այդպիսի իրավունքներ ստանալու համար բոլոր դիմումները (կամ դիմելու իրավունքները) և դրանց թարմացումները կամ |

գործողության երկարաձգումները և նմանատիպ կամ հավասար բոլոր իրավունքները կամ պաշտպանության ձևերը, որոնք կարող են այժմ կամ հետագայում գործել աշխարհի որևէ մասում:

«Ծրագիրը ֆինանսավորողներ» նշանակում է Բանկը, ԱԶԲ-ն և Եվրոպական Միությունը:

«Փողերի լվացում» նշանակում է՝

ա) գույքի փոխարկումը կամ փոխանցումը՝ իմանալով, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից՝ գույքի ապօրինի ծագումը թաքցնելու կամ քողարկելու կամ այդպիսի գործունեության մեջ ներգրավված անձին նրա գործողությունների իրավական հետևանքներից խուսափելու հարցում օժանդակելու նպատակով.

բ) գույքի իրական բնույթը, աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինումը, տեղաշարժը, դրա նկատմամբ իրավունքները կամ սեփականության հետ կապված տվյալները թաքցնելը կամ քողարկելը՝ իմանալով, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը մասնակցությունից.

գ) գույքի ձեռքբերումը, տիրապետումը կամ օգտագործումը՝ ստանալու պահին իմանալով, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեությունից կամ այդպիսի գործունեությանը

մասնակցությունից. կամ

դ) նախորդ կետերում նշված գործողություններից որևէ մեկին մասնակցությունը, դրանք կատարելու նպատակով միավորվելը, դրանք կատարելու փորձերը և դրանց կատարմանն օժանդակելը, դրդելը, նպաստելը և դրանց վերաբերյալ խորհրդատվությունը:

| | |
|---|---|
| «ՀՆԾ» | եզրույթն ունի Նախաբանի «Դ» կետում դրան տրված իմաստը: |
| «Կատարման ժամանակահատված» | նշանակում է Ուժի մեջ մտնելու օրվանից կամ այլընտրանքային օրվանից, եթե այդպիսին նշված է 3-րդ հոդվածում *(Ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը)*, մինչև Կապալառուների կողմից բոլոր Աշխատանքները հանձնելն ու Դրամաշնորհի շահառուի կողմից ընդունելն ընկած ժամանակահատվածը: |
| «Անձնական տվյալներ» | եզրույթն ունի «Համայնքի կառույցների և մարմինների կողմից անձնական տվյալների մշակման առնչությամբ անհատների պաշտպանության և այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական խորհրդարանի և խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգի (OJ L 8, 12.1.2001, էջ 1) 2-րդ հոդվածով դրան տրված իմաստը: |
| «Արգելված վարքագիծ» | նշանակում է ցանկացած՝ |

ա) Հարկադրական գործելակերպ, այսինքն՝ որևէ կողմին կամ կողմի գույքին ուղղակիորեն կամ անուղղակիորեն վնաս հասցնելը կամ վնասելը կամ

վնաս հասցնել կամ վնասել սպառնալը՝ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար;

բ) Դավադրական գործելակերպ, այսինքն՝ երկու կամ ավելի կողմերի միջև պայմանավորվածություն, որը նախատեսված է ոչ պատշաճ նպատակի հասնելու, այդ թվում՝ մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար;

գ) Կոռումպացված գործելակերպ, այսինքն՝ կողմի կողմից ցանկացած արժեքավոր բան առաջարկելը, տալը, ստանալը կամ պահանջելը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մեկ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդելու համար;

դ) Խարդախ գործելակերպ, այսինքն՝ ցանկացած գործողություն կամ անգործություն, այդ թվում՝ իրավիճակը սխալ ներկայացնելը, որը դիտավորյալ կամ անզգուշաբար մոլորեցնում կամ փորձում է մոլորեցնել կողմին՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ պարտականությունից խուսափելու նպատակով; կամ

ե) Խոչընդոտող գործելակերպ, այսինքն՝ սույն Վարկի կամ Ծրագրի հետ կապված Հարկադրական, Դավադրական, Կոռումպացված կամ Խարդախ գործելակերպի առթիվ քննության առնչությամբ՝

i) քննության համար էական նշանակություն ունեցող ապացույցը դիտավորյալ վերացնելը,

կեղծելը, փոփոխելը կամ թաքցնելը. և/կամ որևէ կողմին սպառնալը, հետապնդելը կամ ահաբեկելը՝ կանխելու համար, որ այդ կողմը բացահայտի քննության համար կարևոր հարցերի մասին իրեն հայտնի տեղեկությունները կամ հետամուտ լինի քննությանը; կամ

ii) աուդիտի կամ տեղեկատվության հասանելիության մասով պայմանագրային իրավունքների իրականացմանը նյութապես խոչընդոտելու մտադրությամբ պայմանավորված գործողությունները:

| | |
|---|---|
| «Ծրագիր» | եզրույթն ունի Նախաբանի «Ա» կետում դրան տրված իմաստը: |
| «Շահագործող» | եզրույթն ունի Նախաբանի «Ա» կետում դրան տրված իմաստը: |
| «Հաշվետվություններ» | եզրույթն ունի 5-րդ Հավելվածում *(Հաշվետվությունները)* դրան տրված իմաստը: |
| «Պատժամիջոցի ենթարկված անձ» | նշանակում է մեկ կամ մի քանի Պատժամիջոցների ցանկում նշված ցանկացած անհատ կամ սուբյեկտ: |
| «Պատժամիջոցների ցանկ» | նշանակում է<br>ա) Եվրոպական միության կողմից «Եվրոպական միության մասին» պայմանագրի V բաժնի 2-րդ գլխի, ինչպես նաև «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 215-րդ հոդվածի համաձայն սահմանված ցանկացած |

տնտեսական, ֆինանսական և առևտրային սահմանափակող միջոց և զենքերի էմբարգո, այդ թվում՝ ԵՄ-ի https://eeas.europa.eu/topics/common-foreign-security-policy-cfsp/8442/consolidated-list-of-sanctions_en and https://eeas.europa.eu/sites/eeas/files/restrictive_measures-2016-10-11-clean.pdf պաշտոնական կայքէջերում հրապարակվածները՝ դրանցում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով և լրացումներով հանդերձ, սակայն չսահմանափակվելով դրանցով, կամ հետագայում դրանց փոխարինող ցանկացած էջում հրապարակվածները. կամ

բ) Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի կողմից ՄԱԿ-ի կանոնադրության 41-րդ հոդվածի համաձայն սահմանված ցանկացած տնտեսական, ֆինանսական և առևտրային սահմանափակող միջոց և զենքերի էմբարգո, այդ թվում՝ ՄԱԿ-ի https://www.un.org/sc/suborg/en/sanctions/un-sc-consolidated-list պաշտոնական կայքէջում հրապարակվածները՝ ժամանակ առ ժամանակ դրանցում կատարվող փոփոխություններով և լրացումներով հանդերձ, սակայն չսահմանափակվելով դրանցով, կամ հետագայում դրան փոխարինող ցանկացած էջում հրապարակվածները:

«Միության նշանակում է Եվրոպական միության խորհրդանշանը՝

| | |
|---|---|
| խորհրդանիշ» | կապույտ ֆոնի վրա տասներկու դեղին աստղերով, որն օգտագործվում է Եվրոպական միության բոլոր կառույցների, մարմինների, գրասենյակների և գործակալությունների կողմից՝ համաձայն Եվրոպական միության հրապարակումների գրասենյակի «*Միջկառույցային ոճային ուղեցույցի*» և Եվրոպական հանձնաժողովի կողմից մշակված՝ «*ԵՄ խորհրդանիշի օգտագործումը ԵՄ ծրագրերի համատեքստում և ԵՄ-ի անդամ չհանդիսացող երկրներում. ուղեցույց շահառուների և այլ երրորդ կողմերի համար*» ձեռնարկի՝ դրանցում ժամանակ առ ժամանակ կատարվող թարմացումներով հանդերձ:<br><br>Այդ ուղեցույցները հասանելի են հետևյալ հղմամբ՝ https://ec.europa.eu/info/resources-partners/european-commission-visual-identity_en |
| «Աշխատանքներ» | նշանակում է Դրամաշնորհից ֆինանսավորվող աշխատանքները՝ նկարագրված ստորև՝ 1-ին հավելվածում *(Ծրագրի նկարագրությունը)*: |

1.2. Այն դեպքում, երբ որեւէ Հավելվածում մեծատառով գրված եզրույթին այլ իմաստ է տրվում, այդ սահմանումն ունի այդ Հավելվածում դրան տրված իմաստը բացառապես այդ Հավելվածի նպատակներով:

1.3. Սույն Համաձայնագրում օգտագործվող վերնագրերը և այդ վերնագրերին կատարվող բոլոր հղումները հետապնդում են միայն հղումներ կատարելը դյուրացնելու նպատակ և, հետևաբար, սույն Համաձայնագրի մասը չեն կազմում և հաշվի չեն առնվում սույն Համաձայնագիրը մեկնաբանելիս և չեն ազդում դրա իմաստի վրա:

1.4. Եթե համատեքստից այլ բան չի բխում, ապա սույն Համաձայնագրի

Նախաբանին , առանձին Հոդվածներին, Հավելվածներին և մյուս հատվածներին կատարվող հղումները սույն Համաձայնագրի Նախաբանն, համապատասխան Հոդվածներին, Հավելվածներին և մյուս հատվածներին կատարվող հղումներ են:

1.5. Ցանկացած օրենքին, այդ թվում՝ սույն Համաձայնագրում կոնկրետ նշված ցանկացած օրենսդրական կամ իրավական ակտերին կատարված հղումը, անկախ այն հանգամանքից, թե այդ օրենքում կատարված փոփոխություններին կամ դրան փոխարինող օրենքին սույն Համաձայնագրում հղում կատարվում է, թե ոչ, մեկնաբանվում է որպես այդ օրենքին կատարված այնպիսի հղում, որը ներառում է դրանում ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխությունները կամ նույն կամ նմանատիպ կարգավորման առարկա ունեցող բոլոր այն օրենքները, որոնք ժամանակ առ ժամանակ փոխարինում են այդ նույն օրենքը, երկարաձգում դրա գործողության ժամկետը, կոնսոլիդացնում կամ փոփոխում այն: Համարվում է նաև, որ այդպիսի հղումը ներառում է այդ օրենքի պահանջով կամ դրա համաձայն ընդունված բոլոր կարգավորումները, ենթաօրենսդրական ակտերը, հրամաններն ու կարգադրությունները:

1.6. Հանրային կազմակերպությանը կատարված հղումները ներառում են դրա իրավահաջորդներին և, եթե հանրային կազմակերպությունը դադարում է գոյություն ունենալ կամ դադարում է կատարել իր գործառույթները՝ առանց իրավահաջորդ ունենալու, ապա համարվում է, որ տվյալ հանրային կազմակերպությանը կատարված հղումները ներառում են հղում ցանկացած այնպիսի հանրային կազմակերպության կամ ցանկացած այնպիսի կազմակերպության կամ սուբյեկտի, որն իր վրա է վերցրել տվյալ հանրային կազմակերպության գործառույթները կամ պարտավորությունները կամ երկուսը միասին:

1.7. Այնպիսի եզրույթներ պարունակող հղումները, ինչպիսիք են «ներառում է»-ն և «այդ թվում»-ը, անկախ նրանից, թե դրանք օգտագործվում են «առանց

սահմանափակումների» կամ «սակայն չսահմանափակվելով» բառերի հետ, թե ոչ, չեն համարվում սպառիչ թվարկումներ, այլ ցանկացած դեպքում համարվում են, որ առանց սահմանափակումների են և մեկնաբանվում են այնպես, որ ունենան «ներառում է առանց սահմանափակումների» և «այդ թվում.... սակայն չսահմանափակվելով» իմաստը:

1.8. Ընդհանուր գործածության բառերին, որոնց նախորդում կամ հաջորդում են «այլ» կամ «այդ թվում» կամ «ինչպիսին է» կամ «մասնավորապես» բառերը, չի տրվում սահմանափակող իմաստ, քանի որ դրանց հաջորդում կամ նախորդում են (կախված դեպքից) որոշակի օրինակներ, որոնք ընկնում են այդ ընդհանուր գործածության բառերի իմաստի շրջանակներում:

1.9. Եթե համատեքստից այլ բան չի բխում, ապա սույն Համաձայնագրում ցանկացած տեղ օգտագործվելիս հոգնակին ներառում է եզակին, եզակին ներառում է հոգնակին, և յուրաքանչյուր սեռ ներառում է բոլոր մյուս սեռերը:

1.10. Երբ պահանջվում է, որ որևէ փաստաթուղթ պետք է «հաստատված» լինի, այդ պահանջը նշանակում է, որ համապատասխան փաստաթուղթը պետք է հաստատված լինի որպես լիարժեք ուժի մեջ գտնվող և գործող, ինչպես նաև համապատասխան կրկնօրինակի տրամադրման ամսաթվի դրությամբ չփոփոխված գործիքի իսկական և ամբողջական կրկնօրինակ:

## <u>ՀՈԴՎԱԾ 2. Առարկան</u>

2.1. Սույն Համաձայնագրի նպատակն է սահմանել Կողմերի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված Աշխատանքների իրականացման համար Դրամաշնորհի օգտագործման հետ:

2.2. Դրամաշնորհի շահառուն իրականացնում է կամ համապատասխան դեպքերում ապահովում է, որ Շահագործողը՝

ա) իրականացնի Ծրագիրը, որին աջակցելու նպատակով տրամադրվում է

Դրամաշնորհը, Ֆինանսավորման պայմանագրի դրույթներին, 2-րդ Հավելվածում *(Աշխատանքների գնահատված ծախսերը)* հաշվարկված բյուջեին և 1-ին Հավելվածում *(Ծրագրի նկարագրությունը)* տրված ժամանակացույցին և Ծրագրի նկարագրությանը համապատասխան.

բ) ստանալ Բանկի գրավոր հավանությունը նախքան Ծրագրի նախագծում, իրականացման ժամանակացույցում և ծախսերում որևէ զգալի փոփոխություն կատարելը.

գ) Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող Աշխատանքներն ու հարակից Պայմանագրերն իրականացնել իր պատասխանատվությամբ և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ 1-ին Հավելվածով *(Ծրագրի նկարագրությունը)* սահմանված նպատակներին հասնելու համար.

դ) Դրամաշնորհն օգտագործել բացառապես Ծրագրի ֆինանսավորման համար՝ սույն Համաձայնագրով սահմանված պայմաններին համապատասխան: Այդ գործընթացում Դրամաշնորհի շահառուն իր պարտականությունները պետք է կատարի անհրաժեշտ ուշադրությամբ, արդյունավետությամբ, թափանցիկությամբ և շրջահայացությամբ՝ ողջամիտ ֆինանսական կառավարման սկզբունքին և ոլորտում լավագույն փորձին համապատասխան.

ե) Պայմանագրերն ու Ծրագիրը, որին աջակցելու նպատակով տրամադրվում է Դրամաշնորհը, իրականացնել պատշաճ կերպով՝ պահպանելով գործող բնապահպանական և սոցիալական օրենսդրությունը, այդ թվում՝ համապատասխան բնապահպանական և մարդու իրավունքների վերաբերյալ բազմակողմ համաձայնագրերի և պայմանագրերի պայմանները և Բանկի բնապահպանական և սոցիալական չափանիշները. և

զ) Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող բոլոր Պայմանագրերին

առնչվող գնումների գործընթացներն իրականացնել Բանկի գնումների ուղեցույցին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 3. Ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը

3.1. Համաձայնագիրն ուժի մեջ է Ուժի մեջ մտնելու օրվանից և գործում է այնքան ժամանակ, քանի դեռ դրա դրույթներից բխող որևէ իրավունք, պարտականություն կամ պարտավորություն մնում է չկատարված, եթե այն այլ կերպ չի դադարեցվել 23-րդ հոդվածի *(Դադարեցումը)* դրույթների համաձայն:

3.2. Կատարման ժամանակահատվածն ավարտվում է ոչ ուշ, քան 2022 թվականի դեկտեմբերի 15-ը:

## ՀՈԴՎԱԾ 4. Աշխատանքների ֆինանսավորումը

4.1. Ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերը գնահատված են մինչև 22 910 000 EUR (քսաներկու միլիոն ինը հարյուր տասը հազար եվրո) ՝ առանց հարկերի, այդ թվում՝ ԱԱՀ-ի, ինչպես ավելի մանրամասն ներկայացված է ստորև՝ 2-րդ Հավելվածում *(Աշխատանքների գնահատված ծախսերը)*: Աշխատանքների վերջնական ծախսերը որոշվում են Ծրագրի ավարտից հետո՝ Կապալառուների կողմից ներկայացված վերջնական հաշիվ-ապրանքագրերի հիման վրա, ինչպես վճարվել է Դրամաշնորհի շահառուի կողմից և ընդունվել է Բանկի կողմից՝ համաձայն 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)*:

4.2. Սույն Համաձայնագրի պայմաններին և պահանջներին համապատասխան՝ Բանկը պարտավորվում է Դրամաշնորհի շահառուի համար հասանելի դարձնել մինչև 4 250 000 EUR (չորս միլիոն երկու հարյուր հիսուն հազար եվրո) գումարի չափով Դրամաշնորհ, որը պետք է օգտագործվի Ծրագրի թույլատրելի ծախսերի մի մասը ֆինանսավորելու համար՝ 8-րդ հոդվածով

*(Թույլատրելի ծախսերը)* սահմանված կարգով:

4.3. Բանկն արձանագրում է, որ Դրամաշնորհը տրամադրվում է Եվրոպական միության կողմից՝ Զարգացման համագործակցության գործիքի շրջանակներում և համաձայն Կիրարկման ընդհանուր կանոնակարգի:

4.4. Դրամաշնորհն օգտագործվում է բացառապես Ծրագրի թույլատրելի ծախսերը ծածկելու համար՝ 8-րդ հոդվածով *(Թույլատրելի ծախսերը)* նախատեսված կարգով:

4.5. Համաձայն Պատվիրակման համաձայնագրի դրույթների, եթե Աշխատանքների թույլատրելի ծախսերի՝ 8-րդ հոդվածի *(Թույլատրելի ծախսերը)* համաձայն որոշված վերջնական գումարը պակաս է Դրամաշնորհի՝ 4-րդ հոդվածի*(Աշխատանքների ֆինանսավորումը)* 2-րդ կետում նշված առավելագույն գումարից, ապա Բանկը պետք է տարբերությունը վերադարձնի Եվրոպական հանձնաժողովին:

4.6. Դրամաշնորհը չպետք է ունենա Դրամաշնորհի շահառուի համար շահույթ ստեղծելու նպատակ կամ ազդեցություն:

## ՀՈԴՎԱԾ 5. Նախագծումը և գնումները

Դրամաշնորհի շահառուն ստանձնում է և ապահովում է, որ Շահագործողը ստանձնի Ծրագրի համար սարքավորումների գնումը, ծառայությունների մատակարարման ապահովումը և աշխատանքների պատվիրումը՝ գնումների ընդունելի ընթացակարգերի համաձայն՝ ապահովելով, ի բավարարումն Բանկի, համապատասխանություն վերջինիս՝ Գնումների ուղեցույցում նկարագրված քաղաքականությանը:

## ՀՈԴՎԱԾ 6. Պայմանագրերում փոփոխությունները

6.1. Մինչև Պայմանագրում որևէ փոփոխություն կատարելը, Պայմանագրում

սահմանված որևէ պայմանից հրաժարվելը կամ Պայմանագիրը որևէ այլ կերպ փոփոխելը, ինչպես նաև Պայմանագիրը կասեցնելու, չեղարկելու, լուծելու կամ այլ կերպ դադարեցնելու մասին որոշում կայացնելիս Դրամաշնորհի շահառուն (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) Բանկին տեղեկացնում է առաջարկված գործողության ժամկետի երկարաձգման, փոփոխության, փոխարինման, հրաժարման, փոփոխման կամ որոշման և դրանց պատճառների մասին՝ փոփոխությունները կիրառության մեջ դնելու նախատեսված օրվանից առնվազն երեսուն (30) օրացուցային օր առաջ:

6.2. Եթե Բանկը որոշում է, որ առաջարկությունը հակասում է սույն Համաձայնագրի դրույթներին կամ որևէ կերպ ընդունելի չէր լինի Պատվիրակման համաձայնագրի դրույթների համատեքստում, ապա Բանկը Դրամաշնորհի շահառուին և Շահագործողին անմիջապես տեղեկացնում է դրա մասին՝ նշելով այդպիսի որոշման պատճառները: Եթե Բանկն առաջարկությունը համարում է ընդունելի, ապա Դրամաշնորհի շահառուին և Շահագործողին գրավոր հաղորդում է ընթացք տալուն իր համաձայնության մասին:

6.3. Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որպեսզի Շահագործողը ընթացք տա համապատասխան Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ փաստաթղթի ստորագրմանը կամ, համապատասխան դեպքում, Կատարողին Պայմանագիրը կասեցնելու, չեղարկելու, լուծելու կամ դադարեցնելու մասին ծանուցում ուղարկելուն՝ միայն Բանկի՝ ընթացք տալուն համաձայնությունն ստանալուց հետո՝ 6-րդ հոդվածի *(Պայմանագրերում փոփոխությունները)* 2-րդ կետին համապատասխան:

6.4. Ծառայությունների Պայմանագրում այդ կերպ կատարված բոլոր փոփոխությունների կամ համապատասխան Կատարողին ուղարկված ծանուցումների հաստատված պատճենները պետք է այդ փոփոխությունների կատարման կամ ծանուցումների ուղարկման օրվանից երեսուն (30)

օրացուցային օրվա ընթացքում տրամադրվեն Բանկին:

## ՀՈԴՎԱԾ 7. Դրամաշնորհի վճարումը

7.1. Ծրագրին աջակցելու նպատակով տրամադրվող Դրամաշնորհը կլրացնի Բանկի և ԱԶԲ-ի կողմից տրամադրված սուվերեն վարկերի միջոցով հասանելի ֆինանսական փաթեթը: Դրամաշնորհը Բանկի տրամադրած վարկի, ԱԶԲ-ի տրամադրած վարկի և Հայաստանի ազգային ներդրումների հետ մեկտեղ օգտագործվում է Ծրագրի ծախսերը ֆինանսավորելու համար: Դրամաշնորհը չի ուղղվում Ծրագրի հատուկ բաղադրիչների ֆինանսավորմանը, այլ օգտագործվում է Ծրագրի ծախսերի նույն տեսակների/կատեգորիաների ֆինանսավորման համար, որոնց ֆինանսավորումը թույլատրելի է, և որոնք ընդունելի են Ֆինանսավորման պայմանագրի համաձայն՝ բացառությամբ 2-րդ Հավելվածում *(Աշխատանքների գնահատված ծախսերը)* ներկայացված՝ Ծրագրի ծախսերի բաշխման աղյուսակում նշված շինարարության ծախսերի նկատմամբ տոկոսադրույքի: (Կասկածից խուսափելու համար Դրամաշնորհը չի կարող օգտագործվել Ծրագրի տեխնիկական աջակցության, հաղորդակցության կամ աուդիտի բաղադրիչի ֆինանսավորման համար):

Ծրագրի ֆինանսավորման պլանի նպատակներով գնահատված՝ Ծրագրի ընդհանուր ծախսերի և Դրամաշնորհի, Բանկի վարկի և ԱԶԲ-ի վարկի առավելագույն չափերի գումարի միջև տարբերությանը հավասար ցանկացած գումար ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության կողմից:

Համաձայն Ֆինանսավորման պայմանագրի համապատասխան դրույթների՝ հատկացումները նախատեսվում է կատարել խաչաձև արդյունավետության սկզբունքի համաձայն (Ֆինանսավորման պայմանագրով, ԱԶԲ-ի վարկային համաձայնագրով և սույն Համաձայնագրով նախատեսված համապատասխան նախապայմանների կատարմամբ):

7.2. Բանկը Դրամաշնորհը հատկացնում է եվրոյով՝ Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարին:

7.3. Բոլոր այն գումարների նկատմամբ, որոնք եվրոյով չեն, կիրառվում է Տարադրամի փոխարժեքը՝ դրանք եվրոյի փոխարկելու համար:

7.4. Հատկացումներ կարող են պահանջվել կամ կատարվել միայն այդ դեպքում և այն բանից հետո, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

ա) Կողմերը պատշաճ կերպով ստորագրել են սույն Համաձայնագիրը.

բ) Բանկը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից ստացել է իրավաբանական եզրակացություն՝ Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ, որով հաստատվում է, որ՝

i) Դրամաշնորհի շահառուն պատշաճ կերպով լիազորված է սույն Համաձայնագիրը կնքելու համար, և, որ սույն Համաձայնագիրը Դրամաշնորհի շահառուի անունից ստորագրող անձը պատշաճ կերպով լիազորված է ստորագրելու համար՝ համապատասխան պատշաճ ապացույցների հետ միասին և ուղեկցված սույն Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետությունում կիրառելի օրենքների համաձայն պատշաճ կերպով հաստատված լինելու վերաբերյալ ապացույցներով.

ii) սույն Համաձայնագիրը Դրամաշնորհի շահառուի՝ իրավական, վավեր և պարտադիր ուժ ունեցող համաձայնությունն է, որի կատարումը հնարավոր է ապահովել դրանում ամրագրված պայմանների համաձայն.

iii) Դրամաշնորհի շահառուի կողմից սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտականությունները ստանձնելու համար վավերական լիազորվածության, դրանք իրագործելու կամ

կատարելու համար չի պահանջվում Հայաստանի Հանրապետության որևէ պետական կամ հանրային մարմնի կամ իշխանության կողմից համաձայնություն տալու, հաստատելու, կարգադրություն տալու, լիազորելու, գրանցելու կամ դրանց հայտարարագիր ներկայացնելու կամ դիմելու՝ եզրակացությունում թվարկվածներից բացի որևէ այլ ընթացակարգ.

iv) Դրամաշնորհի շահառուի կողմից սույն Համաձայնագրի կնքումը, մյուս կողմին դրա մասին ծանուցումը և կատարումը չեն խախտում Հայաստանի Հանրապետության օրենքները և չեն հակասում դրանց և չեն հանգեցնում Դրամաշնորհի շահառուի համար պարտադիր որևէ համաձայնագրի կամ պարտավորության որևէ էական խախտման.

v) Լյուքսեմբուրգի օրենսդրությունը որպես Համաձայնագրի նկատմամբ կիրառելի օրենսդրության կիրառում և Դրամաշնորհի շահառուի կողմից Եվրոպական միության արդարադատության դատարանի իրավազորությանը ենթարկվելը. և

գ) Ֆինանսավորման պայմանագրի Հոդված 1.04Գ-ի (Բոլոր տրանշերը) կետ (ա)(i), (iii)-(v) և կետ (բ) (i)-(iv) կատարված են Բանկի համար բավարար ձևով:

7.5 Բանկը Դրամաշնորհի առաջին տրանշը հատկացնում է դրա վերաբերյալ Դրամաշնորհի շահառուի կողմից 4-րդ Հավելվածում *(Վճարման պահանջագրի օրինակելի ձև)* ներառված ձևին համապատասխանող պահանջագիր ստանալուց հետո՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* 4-րդ կետում նշված պայմանները պատշաճ կերպով բավարարվել են, իսկ համապատասխան Պայմանագիրը պատշաճ կերպով ստորագրվել է Շահագործողի և Կապալառուի կողմից, իսկ կնքված Պայմանագրի

հաստատված պատճենը տրամադրվել է Բանկին՝ 5-րդ հոդվածի *(Նախագծումը և գնումները)* դրույթների համաձայն:

7.6. Բանկի կողմից հաջորդական տրանշերի հատկացումը մինչև Դրամաշնորհի՝ 4.2-րդ հոդվածում *(Աշխատանքների ֆինանսավորումը)* նշված առավելագույն չափով կատարվում է դրա վերաբերյալ Դրամաշնորհի շահառուի կողմից 4-րդ Հավելվածում *(Վճարման պահանջագիրը)* ներառված ձևին համապատասխանող պահանջագիր ստանալուց հետո՝ վաթսուն (60) օրացուցային օրվա ընթացքում՝ պայմանով, որ 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը) 4-րդ կետում* նշված պայմանները շարունակում են բավարարված լինել, և որ՝

ա) Դրամաշնորհի շահառուն (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) ներկայացրել է, իսկ Բանկն ընդունել է բոլոր հաշվետվությունները, այդ թվում՝ ծախսերի ստուգման հաշվետվությունները, որոնք, 9-րդ հոդվածի *(Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը)* համաձայն, պետք է ներկայացված լինեին նախքան վճարման պահանջագիր ներկայացնելու օրը.

բ) Դրամաշնորհի շահառուն ներկայացնում է օժանդակ փաստաթղթեր՝ Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ, որոնցով հիմնավորում է, որ այն կատարել է 8-րդ հոդվածի *(Թույլատրելի ծախսերը)* համաձայն որոշված թույլատրելի ծախսեր, որոնց գումարը կազմում է ոչ պակաս, քան անմիջապես նախորդ հատկացման 70%-ը (յոթանասուն տոկոս) և բոլոր նախորդ հատկացումների (ներառյալ առաջին տրանշը) 100%-ը (հարյուր տոկոս), եթե այդպիսիք եղել են.

գ) Ֆինանսավորման պայմանագրի Հոդված 1.04Գ-ի (Բոլոր տրանշերը) կետ (ա)(i), (iii)-(v) և կետ (բ) (i)-(iv) կատարված են Բանկի համար

բավարար ձևով, և

դ) վերջին տրանշով ծածկված կամ ծածկվելիք ծախսերի համար Դրամաշնորհի շահառուն վերոնշյալ փաստաթղթերը ներկայացնում է ոչ ուշ, քան Կատարման ժամանակահատվածի ավարտից հետո՝ երեսուն (30) օրացուցային օր հետո՝ Դրամաշնորհի վերջնական գումարը հաստատելու նպատակով:

Եթե Դրամաշնորհի շահառուի կատարած՝ Պայմանագրերով սահմանված թույլատրելի ծախսերի վերջնական գումարը Դրամաշնորհի՝ Բանկի կողմից սույն՝ 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* համաձայն արդեն հատկացված ընդհանուր գումարից պակաս է, ապա Դրամաշնորհի շահառուի կատարած թույլատրելի ծախսերի վերջնական գումարի գերազանցմամբ հատկացված Դրամաշնորհի գումարը, 20-րդ հոդվածի *(Հետ գանձումը)* համաձայն, Բանկի կողմից հետ է գանձվում և վերադարձվում Եվրոպական հանձնաժողովին:

7.7. Վերոնշյալի առնչությամբ, Դրամաշնորհի շահառուն ապահովում է կամ պետք է ապահովի, որպեսզի Շահագործողը (ըստ կիրառելիության)՝

ա) ապահովի, որ Պայմանագրերով սահմանված վճարումների կատարման համար Կապալառուների կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրերը ներառեն առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) Կատարողի անունը և հասցեն.

2) Պայմանագրի անվանումը և որևէ հատուկ նույնականացման ծածկագիր.

3) վճարման համար պահանջվող գումարը՝ արտահայտված համարժեք եվրոյով՝ կիրառելով Տարադրամի փոխարժեքը՝ վճարման ենթակա հնարավոր հարկերի, մաքսային վճարների և տուրքերի գումարը նշելով առանձին.

4) յուրաքանչյուր համապատասխան դեպքում՝ պահանջված վճարմամբ ծածկվող՝ կատարված Աշխատանքները նույնականացնող տվյալներ, կամ պահանջված վճարումը որպես կանխավճար նույնականացնող հստակ տվյալներ, և

բ) ապահովի և այդ նպատակով յուրաքանչյուր Պայմանագրում ներառի պայմաններ, որ եթե Կատարողի վճարման՝ Պայմանագրով համաձայնեցված պայմանները ներառում են ծախսերի այնպիսի կատեգորիաներ կամ միավորներ, որոնք Կապալառուին վճարվում են փաստացի գնով, երբ Կապալառուի կողմից այդ ծախսերը չեն կատարվել եվրոյով, ապա այդպիսի ծախսերի գումարը, որոնց վճարումը պետք է պահանջվի սույն՝ 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* համաձայն, հաշվարկվում է Կապալառուի՝ այլ արժույթով փաստացի վճարած գումարը եվրոյի փոխարկելով՝ այն Տարադրամի փոխարժեքով, որը կիրառելի է համապատասխան վճարման օրը:

7.8. Ցանկացած հատկացման, այդ թվում՝ առաջին տրանշի համար Բանկն իրեն վերապահում է, անհրաժեշտության դեպքում, վճարման հետ կապված ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթուղթ պահանջելու իրավունք՝ պահանջվող գումարների թույլատրելիությունն ու վճարման ենթակա լինելը հաստատելու համար: Կասկածներից զերծ մնալու համար՝ վճարման պահանջագիրն ընդունելի չէ, եթե չեն բավարարվում սույն՝ 7-րդ հոդվածով *(Դրամաշնորհի վճարումը)* սահմանված էական մեկ կամ մեկից ավելի պահանջներ:

7.9. Բանկը կարող է կասեցնել 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* 5-րդ և 6-րդ կետերում նշված վճարման ժամկետները՝ Դրամաշնորհի շահառուին գրավոր ծանուցելով այն մասին, որ՝

i) վճարման պահանջագրում նշված գումարը ենթակա չէ վճարման, կամ

ii) օժանդակ փաստաթղթերը չեն ներկայացվել ի բավարարումն Բանկի,

կամ

iii) այն կարծում է, որ լրացուցիչ ստուգումներ, այդ թվում՝ տեղում ստուգումներ անցկացնելու կարիք ունի՝ համոզվելու համար, որ հայտարարագրված ծախսերը թույլատրելի են, կամ

iv) այն կարծում է, որ անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք որևէ Պայմանագիր կնքելիս կամ իրականացնելիս տեղի են ունեցել կասկածելի կամ ենթադրելի էական սխալներ, խախտումներ կամ խարդախություն:

Այդպիսի կասեցումը տեղի է ունենում այն օրը, երբ Բանկը ծանուցում է ուղարկում Դրամաշնորհի շահառուին: Չհակասելով 23-րդ հոդվածին *(Դադարեցումը)*՝ վճարման ժամկետի ընթացքը վերսկսվում է այն օրը, երբ վճարումները կասեցնելու պատճառը, ի բավարարումն Բանկի, վերացվում է:

7.10. Դրամաշնորհի շահառուն Բանկին կամ դրա լիազորված ներկայացուցիչներին տրամադրում է 15.2-րդ հոդվածում *(Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները)* նշված աջակցությունը և հասանելիության իրավունքները՝ 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* 9-րդ կետի iii և iv ենթակետերով նախատեսված ստուգումներն ու հսկողության միջոցառումներն իրականացնելու նպատակով:

7.11. Բանկի կողմից սույն՝ 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* համաձայն հատկացումների կատարումը չի ենթադրում Բանկին Դրամաշնորհի շահառուի կողմից ներկայացվող վճարման պահանջագրերի հիմնավորման նպատակով վերջինիս կողմից տրամադրված փաստաթղթերի և տեղեկատվության կանոնավորության կամ իսկության, ամբողջականության և ճշտության ընդունում:

## <u>ՀՈԴՎԱԾ 8. Թույլատրելի ծախսերը</u>

8.1. Դրամաշնորհի շրջանակներում վճարման ենթակա համարվելու նպատակով

այն ծախսերը, որոնք ընդգրկվում են 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* համաձայն Դրամաշնորհի շահառուի կողմից հատկացման մասով ներկայացված պահանջների մեջ, պետք է՝

i) վերաբերեն այն աշխատանքներին, որոնք իրականում կատարվում են Կապալառուի կողմից՝ համապատասխան Պայմանագրի պայմանների համաձայն.

ii) ներառվեն 2-րդ Հավելվածում *(Աշխատանքների գնահատված ծախսերը)* նշված՝ թույլատրելի ծախսերի կատեգորիաներում և ընդգրկվեն համապատասխան Պայմանագրում համաձայնեցված՝ ընդհանուր արժեքի և բյուջեի բաշխման մեջ.

iii) կրի Շահագործողը Կատարման ժամանակահատվածում, և որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացման համար: Սույն Համաձայնագրի նպատակներով՝ համարվում է, որ Շահագործողը «կրել է» ծախսը, եթե Աշխատանքները կամ դրանց մի մասը, որոնց այն համապատասխանում է, իրականացվում են Կապալառուի կողմից և ընդունվում Շահագործողի կողմից և թույլատրելի համարվում Բանկի կողմից՝ Շահագործողի կողմից Բանկ ներկայացված՝ դրամաշնորհի միջոցով ֆինանսավորված աշխատանքների իրականացման վերաբերյալ համապատասխան գործառնական և ֆինանսական հաշվետվությունների հաստատումից հետո՝ այսպիսով բացառելով Կապալառուին կանխավճարի տեսքով արված որևէ վճարում.

iv) բավարարեն կիրառելի հարկային և սոցիալական օրենսդրության պահանջները.

v) լինեն խելամիտ, հիմնավորված և համապատասխանեն սահուն ֆինանսական կառավարման սկզբունքին, մասնավորապես՝ տնտեսության և արդյունավետության մասով, ինչպես նաև ներառվեն Կողմերի միջև համաձայնեցված՝ Ծրագրի բյուջեի նախահաշվում.

vi) լինեն սահմանման և ստուգման ենթակա և մասնավորապես արձանագրվեն Շահագործողի հաշվապահական հաշվետվություններում, սահմանվեն Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառման կիրառելի ստանդարտներին և Շահագործողի՝ ծախսերի հաշվարկման գործելակերպերին համապատասխան.

vii) որևէ կասկածի տեղիք չտալու նպատակով՝ աուդիտների մասով 9-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետերում նկարագրված ծախսերը սույն Դրամաշնորհով ենթակա չեն վճարման: Այդ աուդիտների մասով վճարումները կատարվում են հատուկ աուդիտների համար Եվրոպական հանձնաժողովի կողմից նախատեսված բյուջեից:

8.2. Դրամաշնորհի շահառուն նախքան վճարման մասով որևէ պահանջ Բանկ ներկայացնելը պետք է բավարարի 8-րդ հոդվածի *(Թույլատրելի ծախսերը)* 1-ին կետում նշված պայմանները:

Բացառելու նպատակով 8-րդ հոդվածի *(Թույլատրելի ծախսերը)* 1-ին կետի iii ենթակետի մասով որևէ կասկած՝ Շահագործողը Պայմանագիր կնքելու նպատակով կարող էր գնումների ընթացակարգ սկսել, և Շահագործողի կողմից համապատասխան Կապալառուի հետ այդ Պայմանագիրը կարող էր ստորագրվել մինչև Կատարման ժամանակահատվածի սկիզբը՝ պայմանով, որ այն Աշխատանքները, որոնց մասով կատարված ծախսերի համար վճարում է պահանջվում Դրամաշնորհի շրջանակներում, հանձնվում և ընդունվում են Շահագործողի կողմից Կատարման ժամանակահատվածում (այսպիսով բացառելով որևէ Աշխատանք, որը կարող է հանձնվել նախքան Կատարման ժամանակահատվածը կամ դրա ավարտից հետո):

8.3. Դրամաշնորհի շահառուն ինքը պետք է վարի կամ պետք է ապահովի, որ Շահագործողը (ըստ կիրառելիության) վարի յուրաքանչյուր Պայմանագրի կատարման և Դրամաշնորհի օգտագործման վերաբերյալ լիարժեք, ճշգրիտ

և պարբերական Հաշվետվություններ այնպիսի եղանակով և մանրամասներով, որոնք անհրաժեշտ են և բավարար այն փաստը ճշգրտորեն հաստատելու համար, որ աշխատանքներն իրականացվել են, և որ իր կողմից Բանկ ներկայացված հաշվետվություններով սահմանված ծախսը պատշաճ կերպով կատարվել է Ծրագրի իրականացման նպատակով և սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

Այդպիսի հաշվետվությունները հնարավորություն են ընձեռում, որ Աշխատանքներին առնչվող եկամուտն ու ծախսերը հեշտությամբ վերահսկվեն, սահմանվեն և ստուգվեն և պահվեն Դրամաշնորհի շահառուի կողմից Ավարտի օրվան հաջորդող յոթ (7) տարի ժամկետով և ցանկացած դեպքում, քանի դեռ սույն Համաձայնագրից կամ որևէ Պայմանագրից ծագող կամ դրան առնչվող ցանկացած ընթացիկ աուդիտ, ստուգում, բողոքարկում, դատավարություն կամ պահանջի իրականացման հետամուտ լինելու որևէ հարց լուծում չի ստացել: Դրանք պետք է լինեն հեշտ հասանելի և ներկայացվեն այնպես, որ դրանք ուսումնասիրելը դյուրին լինի:

8.4. Դրամաշնորհի շահառուն տրամադրում է կամ պետք է ապահովի, որ Շահագործողը Բանկին տրամադրի բոլոր անհրաժեշտ և արժանահավատ տեղեկատվությունն ու օժանդակ փաստաթղթերը (այդ թվում՝ Բանկի կողմից այդպիսի պահանջի առկայության դեպքում՝ Բանկի կողմից հավանության արժանացած անկախ աուդիտորի կողմից կատարված ֆինանսական աուդիտի եզրակացությունը), որպեսզի Բանկը համոզվի, որ Դրամաշնորհով համաֆինանսավորված՝ Ծրագրի մաս կազմող ցանկացած աշխատանք կամ մատակարարում հանձնվել է, և որ Շահագործողի կողմից Ծրագրի մասով հայտարարագրված ծախսերն իրականում վճարվել են և համապատասխանում են Դրամաշնորհի տրամադրման և օգտագործման պայմաններին:

## ՀՈԴՎԱԾ 9. Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը

9.1. Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի, որ Շահագործողը (ըստ կիրառելիության) Աշխատանքների տրամադրման հարցում պետք է մշտապես համագործակցի Բանկի և Կապալառուների հետ: Մասնավորապես, Դրամաշնորհի շահառուն և/կամ Շահագործողը պետք է ներդնեն իրենց ամբողջ ջանքերը՝ ապահովելու, որ Կապալառուների աշխատակիցներն ու վերջիններիս խնամքի տակ գտնվող անձինք ձեռք բերեն մուտքի վիզաներ և թույլտվություններ, այդ թվում՝ աշխատանքի և բնակության թույլտվություններ՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառելի օրենքներին համապատասխան՝ նկատի ունենալով այն, որ Շահագործողն ու Դրամաշնորհի շահառուն նրանց ծախսերը հոգալու մասով որևէ պարտավորություն չեն կրում, և, որ վիզա ստանալու համար դիմում, ինչպես նաև դրան կից օժանդակ փաստաթղթեր Հայաստանի Հանրապետության՝ վիզա տրամադրող մարմին ներկայացնելու պատասխանատվությունը կրում են բացառապես Կապալառուները:

9.2. Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի, որ Շահագործողը (ըստ կիրառելիության) Բանկին սույն Համաձայնագրի և Աշխատանքների կատարման վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն տրամադրի: Այդ նպատակով Դրամաշնորհի շահառուն տրամադրում է կամ պետք է ապահովի, որ Շահագործողը Բանկին տրամադրի տարեկան կտրվածքով ներկայացվող միջանկյալ գործառնական հաշվետվություններ և իրականացման վերաբերյալ վերջնական հաշվետվություն, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է նկարագրական և ֆինանսական բաժիններից:

Յուրաքանչյուր հաշվետվության նկարագրական բաժինը պետք է լիարժեք հաշվետվություն պարունակի Պայմանագրերի կնքման մրցույթների ժամանակ գրանցած առաջընթացի հարցերի, իսկ այն ստորագրելուց հետո՝ հաշվետու ժամանակաշրջանում դրանց կատարման և Աշխատանքների հանձնման վերաբերյալ: Իրականացման վերաբերյալ վերջնական

հաշվետվությամբ տրամադրվում է Աշխատանքների արդյունքների և ազդեցության վերաբերյալ մանրակրկիտ նկարագրություն, ինչպես նաև տարեկան կտրվածքով ներկայացվող՝ վերջին միջանկյալ գործառնական հաշվետվության ձևին և բովանդակությանը համապատասխանող տեղեկատվություն (բացառությամբ աշխատանքային ծրագրի վերաբերյալ տեղեկատվության):

Տարեկան կտրվածքով ներկայացվող յուրաքանչյուր միջանկյալ գործառնական հաշվետվություն պետք է լինի Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ և առնվազն ներառի հետևյալ տեղեկատվությունը.

i) տասներկուամսյա (12) ժամանակահատվածում իրականացված ամբողջ գործունեության և շրջակա միջավայրին վերաբերող ու սոցիալական հարցերի՝ հաշվետվության մեջ ներառված ամփոփ նկարագիր, մասնավորապես՝ շահագործման հետ կապված ցանկացած լուրջ մարտահրավեր և դրա հաղթահարման նպատակով ձեռնարկված միջոցառումները, Ծրագրի հետ կապված ռիսկերը և ֆինանսական ռիսկերը (նկարագրությունը, առաջարկվող մեղմացուցիչ գործողությունները և հետագա ընթացքը, մոնիտորինգի ժամանակ կարգավիճակը), ինչպես նաև Ծրագրում Եվրոպական միության ունեցած ներդրման տեսանելիությունն ապահովելուն ուղղված ցանկացած հաղորդակցական գործունեություն և ձեռնարկված միջոցառում.

ii) եթե կիրառելի է, հաշվետվությունն ընդգրկող ժամանակահատվածի ընթացքում գնումների մասով ընթացիկ որևէ գործունեության, մատուցվող ծառայության կամ կատարված աշխատանքների վիճակ.

iii) եթե կիրառելի է, Ծրագրի վրա ազդեցություն գործող՝ ընթացիկ ոլորտային քաղաքականության ցանկացած բարեփոխում.

iv) ըստ աշխատանքների բաղադրիչի բաշխված Դրամաշնորհի

օգտագործման նկարագիր.

v) աշխատանքային ծրագիր և հաջորդող տասներկու (12) ամիսների համար կանխատեսվող հատկացումներ, և

vi) ֆինանսական բաժին, որը բաղկացած է թարմացված ֆինանսավորման պլանից (այդ թվում՝ ամենավերջին հասանելի թվային տվյալները), ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ, որում թվարկված են հաշվետվությունն ընդգրկող ժամանակահատվածում կատարված՝ 8-րդ հոդվածին *(Թույլատրելի ծախսերը)* համապատասխան սահմանված թույլատրելի այն ծախսերը, որոնց մասով Դրամաշնորհից վճարման պահանջներ են ներկայացվել կատարված ծախսի արժույթով և 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* 6-րդ կետի «բ» ենթակետին համապատասխան հաշվարկված՝ եվրոյին համարժեք գումարի չափով, և որում մատնանշված են նաև յուրաքանչյուր առանձին ծախսի անվանումը, չափը, 2-րդ Հավելվածում *(Աշխատանքների գնահատված ծախսերը)* նշված ծախսի համապատասխան կատեգորիան և դա հիմնավորող փաստաթուղթը:

Հատկացումների մասով կանխատեսումների էական փոփոխության դեպքում Դրամաշնորհի շահառուն (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) Բանկ է ուղարկում թարմացված կանխատեսումներ:

9.3. Տարեկան կտրվածքով ներկայացվող միջանկյալ գործառնական հաշվետվությունները Բանկ պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան յուրաքանչյուր տարվա հունվարի 30-ը: Վերջնական հաշվետվությունը պետք է Բանկ ներկայացվի Կատարման ժամանակահատվածի ավարտից ոչ ուշ, քան վեց ամիս անց:

9.4. Դրամաշնորհի շահառուն ներկայացնում է Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարի աուդիտի տարեկան հաշվետվությունները՝ տրամադրելով Ծրագրի ֆինանսավորողների կողմից Ծրագրին հատկացվող ֆինանսական

միջոցների օգտագործման վերաբերյալ անկախ մասնագիտական եզրակացություն: Այդպիսի հաշվետվությունն ստուգվում է Բանկի համար ընդունելի արտաքին աուդիտորի կողմից և ներկայացվում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ից ոչ ուշ, իսկ առաջին անգամ՝ 2020 թվականի փետրվարի 15-ից ոչ ուշ:

Արտաքին աուդիտորի հետ կապված վերոհիշյալ ծախսերը պետք է հոգալ վերոնշյալ 8-րդ հոդվածի 1-ին կետի vii ենթակետին համապատասխան, և դրանք Բանկի կողմից պետք է վճարվեն Շահագործողի ներկայացրած հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ աուդիտի ենթարկված հաշվետվությունը Բանկի կողմից հաստատվելուց հետո:

Որևէ կասկածի տեղիք չտալու նպատակով Դրամաշնորհի հատկացումների հաշվեհամարի աուդիտի մասով կրած ծախսերը չեն ներառվում ծախսերի ստուգման հաշվետվությունում և Դրամաշնորհի շահառուի կողմից հայտարարագրվում են առանձին ծախսերի ստուգման հաշվետվությունը Բանկին ներկայացնելիս:

9.5. Դրամաշնորհի շահառուն պետք է Բանկին թույլատրի կամ պետք է ապահովի, որ Շահագործողը (ըստ անհրաժեշտության) թույլ տա Դրամաշնորհի վերաբերյալ ստուգման երկամյա հաշվետվություն իրականացնել, որը պետք է կազմվի Բանկի կողմից նշանակված անկախ արտաքին աուդիտորի կողմից: Դրամաշնորհի շահառուն պետք է համագործակցի կամ պետք է ապահովի, որ Շահագործողը (ըստ կիրառելիության) լիարժեք համագործակցի արտաքին աուդիտորի հետ և աջակցի վերջինիս աշխատանքներին: Աուդիտորն ուսումնասիրում է, թե արդյոք հայտարարագրված և 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* համաձայն Դրամաշնորհից վճարման համար պահանջվող ծախսերն իրական, ճշգրտորեն արձանագրված և թույլատրելի են՝ սույն Համաձայնագրին համապատասխան:

Այդ ծախսերի ստուգման առաջին հաշվետվությունն ընդգրկում է Ուժի մեջ

մտնելու օրվանից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածը և տրամադրվում է Բանկին 2020 թվականի փետրվարի 15-ից ոչ ուշ: Ծախսերի ստուգման հետագա հաշվետվություններից յուրաքանչյուրն ընդգրկում է երկու (2) օրացուցային տարի (կամ ավելի քիչ՝ ծախսերի վերջին հաշվետվության դեպքում) ժամանակահատվածը և տրամադրվում է Բանկին այդ հաշվետվությունն ընդգրկող ժամանակահատվածի ավարտից հետո՝ քառասուն հինգ (45) օրացուցային օրվա ընթացքում:

Ծախսերի այդ ստուգումն իրականացնելու հետ կապված ծախսերը պետք է հոգալ վերոնշյալ 8րդ հոդվածի 1-ին կետի vii ենթակետին համապատասխան, և դրանք Բանկի կողմից պետք է վճարվեն Շահագործողի ներկայացրած հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ աուդիտի ենթարկված հաշվետվությունը Բանկի կողմից հաստատվելուց հետո:

Որևէ կասկածի տեղիք չտալու նպատակով ծախսերի ստուգման հաշվետվության մասով կրած ծախսերը չեն ներառվում ծախսերի ստուգման հաշվետվությունում և Դրամաշնորհի շահառուի կողմից (Շահագործողի միջոցով) հայտարարագրվում են առանձին ծախսերի ստուգման հաշվետվությունը Բանկին ներկայացնելիս:

9.6. Դրամաշնորհի շահառուն (Շահագործողի միջոցով) ամեն տարի տրամադրում է նախորդ օրացուցային տարվա ծախսերի՝ արտաքին աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունը: Այդպիսի ֆինանսական հաշվետվությունն աուդիտի է ենթարկվում Բանկի համար ընդունելի արտաքին աուդիտորի կողմից և ներկայացվում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ից ոչ ուշ, իսկ առաջին անգամ՝ ամենաուշը մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը:

9.7. Բոլոր հաշվետվությունները Դրամաշնորհի շահառուի կամ Շահագործողի կողմից Բանկին տրամադրվում են թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

9.8. Եթե Դրամաշնորհի շահառուն (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) մինչև 9-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետերում նշված վերջնաժամկետների լրանալը Բանկին չի տրամադրում պահանջվող հաշվետվություններից որևէ մեկը և չի տրամադրում ընդունելի և բավարարող գրավոր բացատրություն այն մասին, թե ինչու չի կարող կատարել այդ պարտավորությունը, ապա Բանկը կարող է 23-րդ հոդվածի *(Դադարեցումը)* դրույթներին համապատասխան դադարեցնել Համաձայնագրի գործողությունը և գանձել սույն Համաձայնագրով Դրամաշնորհից արդեն իսկ հատկացված և չհիմնավորված գումարները, այդ թվում՝ գանձումներ կատարելու մասով իր իրավունքները 22-րդ հոդվածին *(Իրավունքների շնորհումը)* համապատասխան Եվրոպական հանձնաժողովին շնորհելու միջոցով:

9.9. Բանկը կարող է Դրամաշնորհի շահառուի կողմից (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) 9-րդ հոդվածի *(Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը)* համաձայն ներկայացված ցանկացած հաշվետվության վերաբերյալ պարզաբանումներ, փոփոխությունների կատարում, լրացուցիչ տեղեկատվություն կամ փաստաթղթեր պահանջել, որոնք Դրամաշնորհի շահառուի կողմից պետք է տրամադրվեն այդպիսի պահանջ ներկայացնելուց հետո՝ տասնհինգ (15) օրացուցային օրվա ընթացքում:

## ՀՈԴՎԱԾ 10. Արդյունքների նկատմամբ իրավունքները և մտավոր սեփականության իրավունքները

10.1. Հաշվի առնելով որևէ անհատի կամ իրավաբանական անձի, այդ թվում՝ Կողմերից որևէ մեկի մտավոր սեփականության՝ նախօրոք գոյություն ունեցող իրավունքները՝ Կապալառուների կողմից պայմանագրերի կատարման ընթացքում հավաքված կամ պատրաստված նոր նյութերի, այդ թվում՝ բոլոր հաշվետվությունների, համապատասխան տվյալների ու

այնպիսի տեղեկատվության նկատմամբ մտավոր սեփականության իրավունքները, ինչպիսիք են քարտեզները, սխեմաները, ծրագրերը, տվյալների բազաները, այլ փաստաթղթեր և ծրագրային ապահովում, լրացուցիչ հաշվետվությունները և նյութերը, պատկանում են Դրամաշնորհի շահառուին:

10.2. Չհակասելով 10-րդ հոդվածի *(Արդյունքների նկատմամբ իրավունքները և մտավոր սեփականության իրավունքները)* 1-ին կետին և հաշվի առնելով գաղտնիության վերաբերյալ կիրառելի պահանջները՝ Դրամաշնորհի շահառուն սույնով Բանկին և Եվրոպական հանձնաժողովին շնորհում է մտավոր սեփականության ցանկացած նոր իրավունքի մասով անվերադարձ, ոչ բացառիկ, անհատույց և անժամկետ լիցենզիա՝ ենթալիցենզավորման իրավունքով: Մասնավորապես, Բանկը և Եվրոպական հանձնաժողովը սույն Համաձայնագրից և Պայմանագրերից բխող բոլոր փաստաթղթերն ազատորեն օգտագործելու, այդ թվում՝ պահպանելու, փոփոխելու, թարգմանելու, ցուցադրելու, ցանկացած տեխնիկական եղանակով վերարտադրելու, հրապարակելու կամ ցանկացած կրիչով փոխանցելու իրավունք ունեն՝ անկախ դրանց տեսակից: Այդ նպատակով Դրամաշնորհի շահառուն ապահովում է, որ վերջինս իրավունք ունենա օգտվելու նախօրոք գոյություն ունեցող՝ մտավոր սեփականության համապատասխան իրավունքներից, այդ թվում՝ 10-րդ հոդվածով *(Արդյունքների նկատմամբ իրավունքները և մտավոր սեփականության իրավունքները)* նախատեսված լիցենզիան շնորհելու իրավունքից:

10.3. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի կատարման առնչությամբ արված լուսանկարում կամ նկարահանված ֆիլմում ճանաչված անձ է պատկերված, Դրամաշնորհի շահառուն (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) Բանկին 9-րդ հոդվածին *(Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը)* համապատասխան ներկայացվող վերջնական հաշվետվությունում ներառում է այդ անձի՝ իր պատկերի այդպիսի

օգտագործումը թույլատրող հայտարարությունը՝ նկատի ունենալով այն, որ այդ պահանջը չի կիրառվում հանրային վայրերում արված լուսանկարների կամ նկարահանված ֆիլմերի դեպքում, երբ հասարակության այս կամ այն անդամը ենթակա է նույնականացման միայն հիպոթետիկորեն, կամ այն դեպքում, երբ հանրային անձանց մասնակցությամբ արվել են այնպիսի լուսանկարներ, կամ նկարահանվել են այնպիսի ֆիլմեր, որտեղ նրանք գործում են իրենց հանրային կարգավիճակին համապատասխան:

10.4. Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի, որ Շահագործողը յուրաքանչյուր Պայմանագրում ներառի այնպիսի դրույթներ, որոնցով Կատարողից պահանջվում է անհրաժեշտության դեպքում կատարել 10-րդ հոդվածում *(Արդյունքների նկատմամբ իրավունքները և մտավոր սեփականության իրավունքները)* նշված պարտավորությունները:

## ՀՈԴՎԱԾ 11. Տեսանելիությունը և թափանցիկությունը

11.1. Դրամաշնորհի շահառուն պետք է ձեռնարկի կամ պետք է ապահովի, որ Շահագործողը (անհրաժեշտության դեպքում) ձեռնարկի բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի Եվրոպական միությունից Պայմանագրերի մասով ֆինանսավորում ստանալու փաստը հրապարակվի: Լրատվամիջոցներին, Կապալառուներին տրամադրված տեղեկատվությամբ, բոլոր առնչվող հրապարակված նյութերով, պաշտոնական ծանուցումներով, հաշվետվություններով ու հրապարակումներով պետք է հաստատվի այն փաստը, որ Պայմանագրերն իրականացվել են «*Եվրոպական միության ֆինանսավորմամբ*», ինչպես նաև պատշաճ ձևով պետք է ցուցադրվեն Միության խորհրդանշանը, ինչպես նաև Բանկի լոգոտիպը:

11.2. Կողմերը համաձայն են Եվրոպական հանձնաժողովին և Հայաստանի Հանրապետությունում Եվրոպական միության պատվիրակությանը սույն

Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում հրավիրել՝ մասնակցելու սույն Համաձայնագրի, Պայմանագրերի կամ Ծրագրի առնչությամբ իրենց կողմից կազմակերպվող միջոցառումներից ցանկացածին և բոլորին: Այդ միջոցառումները կարող են ներառել Կողմերի միջև պարբերաբար տեղի ունեցող կամ տեխնիկական բնույթի աշխատանքային հանդիպումներ Դրամաշնորհից օժանդակություն ստացող Ծրագրի շրջանակներում:

11.3. Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի, որ Շահագործողը յուրաքանչյուր Պայմանագրում ներառի այնպիսի դրույթներ, որոնցով Կապալառուից պահանջվում է հարգել 11-րդ հոդվածի *(Տեսանելիությունը և թափանցիկությունը)* 1-ին կետում նշված՝ տեսանելիությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև նման Պայմանագրի համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետվությունում կամ նրա կողմից ներկայացվող որևէ այլ փաստաթղթում ներառել հետևյալ տեքստերը՝

ա) *«Սույն փաստաթուղթը մշակվել է Եվրոպական միության կողմից ֆինանսական աջակցությամբ՝ Հարևանության ներդրումային ծրագրի շրջանակներում:».*

բ) «Պատասխանատվությունից հրաժարում. *Սույն հաշվետվության բովանդակության մասով ողջ պատասխանատվությունը կրում են հեղինակները: Սույն փաստաթղթում ներկայացված տեսակետները պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական ներդրումային բանկի տեսակետները: Եվրոպական միությունը, Եվրոպական ներդրումային բանկը, դրանց անդամները, ղեկավար մարմինները, աշխատակիցները կամ ներկայացուցիչները որևէ պարտավորություն չեն կրում տեղեկատվության մեկնաբանությունից կամ օգտագործումից, սույն փաստաթղթում պարունակվող տեսակետների վրա հիմնվելուց կամ սույն հաշվետվության մեջ ներկայացված արդյունքների կամ մեթոդների՝ երրորդ կողմի կողմից օգտագործումից բխող որևէ*

*կորստի կամ վնասի համար։*»:

11.4. Դրամաշնորհի շահառուն (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) 9-րդ հոդվածին *(Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը)* համապատասխան Բանկին ներկայացվող պարբերական հաշվետվություններում ներառում է Եվրոպական միության ֆինանսական աջակցության տեսանելիությունն ապահովելու նպատակով իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն և Բանկին տրամադրում է ընթացիկ աշխատանքների և իրավիճակի վերաբերյալ հաշվետվություններ, հրապարակումներ, մամուլի հաղորդագրություններ և սույն Համաձայնագրի վերաբերյալ այլ թարմ տեղեկություններ՝ դրանք հրապարակվելուն պես:

11.5. Հաշվի առնելով գաղտնիության, անվտանգության և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ կիրառելի կանոնները՝ Դրամաշնորհի շահառուն Բանկին և Եվրոպական հանձնաժողովին լիազորում է տարեկան կտրվածքով հրապարակել սույն Համաձայնագրի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը. սույն Համաձայնագրի անվանումը, բնույթն ու նպատակը, Դրամաշնորհի շահառուի անվանումը, հասցեն և քաղաքացիությունը և սույն Համաձայնագրով տրամադրված ֆինանսական աջակցության առավելագույն չափը: Այդ նպատակով Դրամաշնորհի շահառուն Բանկին համապատասխան տեղեկատվությունը տրամադրում է Բանկի կողմից այդ մասով պահանջ ներկայացնելուց հետո՝ տասը (10) օրացուցային օրվա ընթացքում:

11.6. Դրամաշնորհի շահառուի կողմից պատշաճ կերպով հիմնավորված պահանջի հիման վրա Բանկը կարող է համաձայնել զերծ մնալ նման հրապարակայնությունից, եթե վերոնշյալ տեղեկատվության բացահայտումը պարունակում է Դրամաշնորհի շահառուի անվտանգությանը սպառնացող կամ վերջինիս օրինական շահերը վնասող ռիսկեր:

11.7. Եթե Դրամաշնորհի շահառուն և/կամ Շահագործողն իր կայքում սույն

Համաձայնագրի կամ Պայմանագրերի վերաբերյալ որևէ տեղեկատվություն է հրապարակում, ապա Դրամաշնորհի շահառուն Բանկին տրամադրում է այդ կայքի հասցեն՝ դրանով Բանկին այդ հասցեն Բանկի կայքում հրապարակելու լիազորություն տալով:

## ՀՈԴՎԱԾ 12. Շահերի բախումը

12.1. Դրամաշնորհի շահառուն պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ սույն Համաձայնագրից բխող կամ դրա առնչությամբ առկա շահերի բախումը կանխելու, մեղմելու կամ վերջ դնելու նպատակով: Շահերի բախում մասնավորապես կարող է առաջանալ տնտեսական շահերի, քաղաքական կամ ազգային պատկանելության, ընտանեկան կամ զգացմունքային կապերի կամ ցանկացած այլ հարաբերության կամ համատեղ շահի արդյունքում: Դրամաշնորհի շահառուն սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում Բանկին անհապաղ տեղեկացնում է այդպիսի բախման հանգեցնող կամ դրան հանգեցնելու հավանականություն ունեցող ցանկացած իրավիճակի մասին:

12.2. Բանկին իրավունք է վերապահվում ստուգելու Դրամաշնորհի շահառուի կողմից շահերի բախումը կանխելու, մեղմելու կամ վերջ դնելու նպատակով ձեռնարկված ցանկացած միջոցառման համարժեքությունը, իսկ անհրաժեշտության դեպքում նրա պահանջով լրացուցիչ միջոցառումներ կարող են ձեռնարկվել:

12.3. Դրամաշնորհի շահառուի կողմից սույն հոդվածով սահմանված պարտավորությունները չկատարվելու դեպքում Բանկը կարող է 23-րդ հոդվածի *(Դադարեցումը)* դրույթներին համապատասխան դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը:

## ՀՈԴՎԱԾ 13. Գաղտնիությունը

13.1. Կողմերը երաշխավորում են, որ Գաղտնի տեղեկատվության կամ որևէ Գաղտնի տեղեկատվություն պարունակող կամ դրան առնչվող բոլոր փաստաթղթերի նկատմամբ արդյունավետ հսկողություն կսահմանեն՝ կիրառելով զգուշավորության այն չափանիշները, որոնք իրենք կիրառում են իրենց սեփական գաղտնի տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու նպատակով, և, որ իրենք չեն օգտագործի կամ վերարտադրի որևէ Գաղտնի տեղեկատվություն պարունակող կամ դրան առնչվող որևէ փաստաթուղթ, որևէ անձի թույլ չեն տա օգտագործել կամ վերարտադրել այդպիսի փաստաթուղթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա անհրաժեշտ է վերջինիս իրավունքները կամ պարտավորությունները սույն Համաձայնագրի ժամկետներին և պայմաններին համապատասխան իրականացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով, կամ Գաղտնի տեղեկատվության սեփականատիրոջ կողմից նախապես տրված գրավոր համաձայնության առկայության դեպքի:

13.2. 13-րդ հոդվածի *(Գաղտնիությունը)* 1-ին կետում նշված պարտավորությունները չեն համարվում խախտված՝ այնքանով, որքանով.

ա) Գաղտնի տեղեկատվության բացահայտումը կամ դրա հասանելիությունը թույլատրվում կամ պահանջվում է օրենքով կամ որևէ իրավասու կարգավորող մարմնի կողմից սահմանված կանոններով կամ կարգավորումներով, որոնք կիրառելի են բացահայտող Կողմի նկատմամբ.

բ) Կողմը Գաղտնի տեղեկատվությունը բացահայտում է, որպեսզի պաշտպանի իր շահերը ցանկացած դատավարության կամ արբիտրաժային դատավարության ընթացքում, որի կողմ է հանդիսանում.

գ) Գաղտնի տեղեկատվությունը բացահայտվում է, կամ դրա հասանելիությունն ապահովվում է 15-րդ հոդվածում *(Սպրուգումները,*

*հսկողությունն ու աուդիտները)* նշված պարտավորությունների համաձայն.

դ) Գաղտնի տեղեկատվությունը Բանկի կողմից՝ Պատվիրակման համաձայնագրին համապատասխան բացահայտվում է Եվրոպական հանձնաժողովի կամ Աուդիտորների եվրոպական դատարանի համար.

ե) Դրամաշնորհի շահառուի կողմից գաղտնի համարվող տեղեկատվությունը Բանկի՝ թափանցիկության ապահովման քաղաքականության համաձայն հասանելի է պահանջի դեպքում, կամ դրա համառոտ տարբերակը հրապարակվում է Բանկի կայքում:

13.3. Եթե որևէ Կողմ 13-րդ հոդվածի *(Գաղտնիությունը)* 2-րդ կետի համաձայն, բացառությամբ դրա «ե» կետի, Գաղտնի տեղեկատվությունը բացահայտում է որևէ երրորդ կողմի համար, ապա բացահայտող Կողմը ստացող երրորդ կողմին ծանուցում է այն մասին, որ տեղեկատվությունը համարվում է Գաղտնի տեղեկատվություն:

13.4. Եթե որևէ Կողմ 13-րդ հոդվածի *(Գաղտնիությունը)* 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն Գաղտնի տեղեկատվություն է բացահայտում որևէ երրորդ կողմի համար, այդ Կողմը տեղեկատվությունը բացահայտելու որևէ պահանջի մասին տեղեկանալուց անմիջապես հետո դրա մասին գրավոր ծանուցում է մյուս Կողմին, իսկ մյուս Կողմը այդպիսի հանգամանքներում իրավունք ունի վիճարկելու ցանկացած Գաղտնի տեղեկատվության բացահայտումը:

## ՀՈԴՎԱԾ 14. Գնահատումը

14.1. Եթե Բանկը կամ Եվրոպական հանձնաժողովը Դրամաշնորհի կամ Աշխատանքների գնահատման կամ մշտադիտարկման առաքելություն է իրականացնում, ապա Դրամաշնորհի շահառուն (ուղղակիորեն կամ Շահագործողի միջոցով) Բանկի կամ Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներին կամ նրանց կողմից լիազորված անձանց տրամադրում

է ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկատվություն, որը կօժանդակի նրանց առաքելությանը, ինչպես նաև շնորհում է նրանց 15-րդ հոդվածում նշված *(Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները)* հասանելիության իրավունքները՝ հաշվի առնելով 13-րդ հոդվածը *(Գաղտնիությունը)*:

14.2. Եթե Կողմերից որևէ մեկն իրականացնում կամ հանձնարարում է Դրամաշնորհի կամ Աշխատանքների օգտագործման գնահատում, ապա այն պետք է մյուս Կողմին տրամադրի գնահատման վերաբերյալ համապատասխան հաշվետվության պատճենը: Բանկն այդ գնահատման վերաբերյալ հաշվետվության պատճենը տրամադրելու իրավունք է վերապահում Եվրոպական հանձնաժողովին, որը ներկայացնում է Եվրոպական միությունը՝ որպես դոնոր:

## ՀՈԴՎԱԾ 15. Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները

15.1. Դրամաշնորհի շահառուն պետք է թույլատրի կամ պետք է ապահովի, որ Շահագործողը (ըստ անհրաժեշտության) թույլատրի Բանկին, Եվրոպական հանձնաժողովին, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին (ԽՊԵԳ), Աուդիտորների եվրոպական դատարանին և վերջինիս կողմից լիազորված ցանկացած արտաքին աուդիտորի ՝ i) ստուգել Աշխատանքների իրականացումն ու Պայմանագրերի կատարումը բնօրինակ փաստաթղթերն ուսումնասիրելու (այդ թվում՝ դրանցից պատճեններ կատարելու իրավունքով) և տեղում իրականացվող ստուգումների միջոցով. և ii) անհրաժեշտության դեպքում, կատարել համալիր աուդիտ՝ հաշվարկները հիմնավորող օժանդակ փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ու Աշխատանքների ֆինանսավորմանն առնչվող ցանկացած այլ փաստաթղթի հիման վրա: Այդ ստուգումները, հսկողությունը կամ աուդիտները կարող են տեղի ունենալ Կատարման ժամանակահատվածին հաջորդող առավելագույնը յոթ (7) տարվա ընթացքում:

15.2. 15-րդ հոդվածի *(Սպուգումները, հսկողությունն ու աուդիտները)* 1-ին մասի համաձայն՝ Դրամաշնորհի շահառուն պետք է տրամադրի կամ պետք է ապահովի, որ Շահագործողը տրամադրի Բանկի, Եվրոպական հանձնաժողովի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ), Աուդիտորների եվրոպական դատարանի աշխատակազմին կամ ներկայացուցիչներին և վերջիններիս կողմից լիազորված ցանկացած արտաքին աուդիտորի կամ ապահովի, որ նրանց այդ նպատակով տրամադրվի անհրաժեշտ հասանելիություն կամ աջակցություն: 15-րդ հոդվածին *(Սպուգումները, հսկողությունն ու աուդիտները)* համապատասխան տրամադրված հասանելիությունը պետք է հիմնված լինի երրորդ կողմերից գաղտնիության պահպանման վրա՝ չհակասելով հանրային կամ Եվրոպական միության իրավունքից բխող՝ այդ հաստատությունների կամ մարմինների և դրանց աշխատակազմերի, ներկայացուցիչների նկատմամբ կիրառվող պարտավորություններին:

15.3. Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի կամ պետք է հետևի, որպեսզի Շահագործողը (ըստ կիրառելիության) ապահովի, այդ թվում՝ այս առումով յուրաքանչյուր Պայմանագրում ժամկետներ նախատեսելով, որ 15-րդ հոդվածին *(Սպուգումները, հսկողությունն ու աուդիտները)* համապատասխան շնորհված իրավունքները հավասարապես կիրառելի լինեն յուրաքանչյուր Կապալառուի նկատմամբ:

15.4. Դրամաշնորհի շահառուն գիտակցում է կամ պետք է ապահովի, որ Շահագործողը գիտակցի, որ Բանկը կարող է պարտադվել Դրամաշնորհի շահառուի և/կամ Շահագործողի, սույն Համաձայնագրի և Պայմանագրերի վերաբերյալ այդպիսի տեղեկատվություն հրապարակել Եվրոպական միության որևէ իրավասու հաստատության կամ մարմնի համար՝ Եվրոպական միության իրավունքի համապատասխան պարտադիր դրույթների համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 16. Անձնական տվյալների պաշտպանությունը

16.1. Անձնական տվյալների մշակումն իրականացվում է Բանկի կողմից՝ Եվրոպական միության հաստատությունների և մարմինների կողմից Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության և այդ տվյալների ազատ փոխանցման վերաբերյալ՝ Եվրոպական միության կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

16.2. Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի, որ Շահագործողը Անձնական տվյալների հասանելիությունն ու օգտագործումը սահմանափակի սույն Համաձայնագրի և պայմանագրերի կատարման, կառավարման և մշտադիտարկման համար խիստ անհրաժեշտ դեպքերով, ինչպես նաև ձեռնարկի համապատասխան տեխնիկական և կազմակերպական անվտանգության միջոցներ, որոնք անհրաժեշտ են այդ Անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելու և դրանց հասանելիությունը սահմանափակելու համար:

## ՀՈԴՎԱԾ 17. Բարեվարքության հանձնառությունը

17.1. Դրամաշնորհի շահառուն երաշխավորում և հանձն է առնում, որ Ծրագրի շրջանակներում ինքը և որևէ անձ իր գիտությամբ չեն դրսևորել, և որ ինքը և որևէ այլ անձ իր համաձայնությամբ կամ նախնական իմացությամբ չեն դրսևորի Արգելված վարքագիծ, չեն իրականացնի ահաբեկչության ֆինանսավորման կամ փողերի լվացման հետ կապված՝ Ծրագրին առնչվող որևէ անօրինական գործունեություն, Ծրագրի համար որևէ մրցութային ընթացակարգ կամ սույն Համաձայնագրով նախատեսված կամ Դրամաշնորհին վերաբերող որևէ գործարք:

17.2. Դրամաշնորհի շահառուն հայտնում և երաշխավորում է Բանկին, որ որքանով նա տեղեկացված է, Դրամաշնորհի շահառուի, Շահագործողի կողմից Ծրագրում ներդրված որևէ ֆինանսական միջոց հանցավոր ծագում

չունի, ինչպես նաև ձեռք չի բերվել Փողերի լվացման հետևանքով կամ կապ չունի Ահաբեկչության ֆինանսավորման հետ:

17.3. Այս նպատակով Դրամաշնորհի շահառուի որևէ պաշտոնյայի իմացությունն այդ մասին դիտարկվում է որպես Դրամաշնորհի շահառուի իմացություն: Դրամաշնորհի շահառուն այդպիսի գործողության կատարում ենթադրող որևէ փաստ կամ տեղեկատվություն իրեն հայտնի դառնալու դեպքում պարտավորվում է Բանկին տեղեկացնել դրա մասին և աջակցել Բանկի, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ), Եվրոպական հանձնաժողովի կամ վերջիններիս կողմից լիազորված որևէ անձի կողմից այդ գործողության կամ վարքագծի վերաբերյալ իրականացվող քննությանը:

17.4. Արգելված վարքագծի ենթադրյալ կամ կասկածելի որևէ դրսևորում քննելու վերաբերյալ Բանկի կողմից հիմնավոր պահանջ ներկայացվելու դեպքում Դրամաշնորհի շահառուն հանձն է առնում այդպիսի գործողություն իրականացնել:

17.5. Դրամաշնորհի շահառուն հանձն է առնում, ինչպես նաև ապահովում է, որ Շահագործողը հանձն առնի ապահովել բոլոր Պայմանագրերում այն անհրաժեշտ դրույթների ներառումը, որոնցով Դրամաշնորհի շահառուին, Բանկին, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակին (ԽՊԵԳ), Եվրոպական հանձնաժողովին կամ վերջիններիս կողմից լիազորված որևէ անձի հնարավորություն է ընձեռվում քննել կամ դադարեցնել Ծրագրի, սույն Համաձայնագրի կամ Դրամաշնորհի հետ կապված որևէ Արգելված վարքագծի ենթադրյալ կամ կասկածելի որևէ դրսևորում:

17.6. Դրամաշնորհի շահառուն հանձն է առնում, ինչպես նաև ապահովում է, որ Շահագործողը որևէ գործարար հարաբերություն չհաստատեն Պատժամիջոցների ենթարկված որևէ անձի հետ, որևէ ֆինանսական միջոց

հասանելի չդարձնեն վերջինիս համար, ուղղակի կամ անուղղակի ձևով դրանք չուղղեն Պատժամիջոցների ենթարկված որևէ անձի օգտին:

17.7. Դրամաշնորհի շահառուն հանձն է առնում, ինչպես նաև ապահովում է, որ Շահագործողը հանձն առնի ողջամիտ ժամկետում պատշաճ միջոցներ ձեռնարկել իրենց այն ներկայացուցիչների, պաշտոնյաների կամ աշխատակիցների նկատմամբ, որոնք դարձել են Պատժամիջոցների ենթարկված անձինք, կամ, որոնց նկատմամբ իրենց աշխատանքային պարտավորությունների իրականացման ժամանակ Արգելված վարքագիծ դրսևորելու մասով դատարանի կողմից վերջնական կամ անփոփոխ վճիռ է կայացվել, որպեսզի ապահովվի այդպիսի անդամի ներգրավվածության բացառումը Դրամաշնորհի շահառուի կամ Շահագործողի՝ Դրամաշնորհին, սույն Համաձայնագրին և Ծրագրին առնչվող գործունեությունից:

17.8. Դրամաշնորհի շահառուի կողմից այդ պարտավորությունների չկատարումը կարող է Բանկին սույն Համաձայնագիրը 23-րդ հոդվածին *(Դադարեցումը)* համապատասխան դադարեցնելու իրավունք տալ:

## <u>ՀՈԴՎԱԾ 18. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը</u>

18.1. Անհաղթահարելի ուժի ազդեցության ենթարկված Կողմը պետք է մյուս Կողմին անհապաղ տեղեկացնի այդ մասին՝ նշելով խնդրի բնույթը, հնարավոր տևողությունը և կանխատեսելի հետևանքները, ինչպես նաև վնասի նվազեցման նպատակով ձեռնարկված կամ ձեռնարկվելիք միջոցները:

18.2. Եթե Կողմն իր պարտավորությունները չի կարող կատարել Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, ապա դա սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունների խախտում չի համարվում:

## ՀՈԴՎԱԾ 19. Կասեցումը

19.1. Շահագործողը կարող է կասեցնել բոլոր Պայմանագրերի կամ դրանց մի մասի կատարումը, իսկ Բանկը կարող է Դրամաշնորհի շահառուից այդպիսի կասեցում պահանջել, եթե հանգամանքների (այդ թվում՝ Անհաղթահարելի ուժի ազդեցության) բերումով այն շարունակելը բավականին դժվարանում կամ վտանգավոր է դառնում: Եթե կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշումը կայացվում է Շահագործողի կողմից, ապա Դրամաշնորհի շահառուն պետք է ապահովի, որ Շահագործողը Բանկին անհապաղ տեղեկացնի դրա մասին և տրամադրի բոլոր անհրաժեշտ մանրամասները: Կատարումը կասեցնելու մասին որոշում կայացվելու դեպքում Բանկը կամ Դրամաշնորհի շահառուն կարող են դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ 23-րդ հոդվածի *(Դադարեցումը)* դրույթներին համապատասխան: Սույն Համաձայնագրի գործողությունը չդադարեցվելու դեպքում Դրամաշնորհի շահառուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները կասեցման ժամանակահատվածը նվազագույնի հասցնելու նպատակով և կատարումը վերսկսում է այն ժամանակ, երբ հանգամանքները դա թույլ են տալիս, ինչպես նաև դրա մասին տեղեկացնում է Բանկին:

19.2. Բանկը նույնպես կարող է կասեցնել սույն Համաձայնագրի կատարումն այն դեպքում, երբ անհրաժեշտ է ստուգել, թե արդյոք i) Աշխատանքների կամ Պայմանագրերի կատարումն իրականացվել է զգալի սխալներով, օրինախախտումներով կամ խարդախությամբ. ii) Դրամաշնորհի շահառուն խախտել է սույն Համաձայնագրով սահմանված որևէ էական պարտավորություն, կամ iii) Եվրոպական հանձնաժողովը կասեցրել է Պատվիրակման համաձայնագրի կատարումը: Դրամաշնորհի շահառուն (ուղղակի կերպով կամ Շահագործողի միջոցով) այդ ստուգման վերաբերյալ Բանկի կողմից պահանջված որևէ տեղեկատվություն, պարզաբանում կամ փաստաթուղթ է տրամադրում այդպիսի պահանջ ստանալուց հետո՝ երեսուն

(30) օրացուցային օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ այդպիսի ստուգումները ցույց են տալիս, որ աշխատանքների կամ պայմանագրերի կատարումն իրականացվել է զգալի սխալներով, օրինախախտումներով կամ խարդախությամբ կամ Դրամաշնորհի շահառուի, Շահագործողի կամ որևէ Կապալառուի կողմից պարտավորությունների խախտմամբ, ապա Բանկը Համաձայնագրի գործողությունը 23-րդ հոդվածին *(Դադարեցումը)* համապատասխան դադարեցնելու և արդեն իսկ հատկացված գումարները այն չափով գանձելու իրավունք է վերապահում իրեն, որքանով այդպիսի հատկացումը կատարվել է զգալի սխալներով, օրինախախտումներով, խարդախությամբ կամ պարտավորությունների խախտմամբ: 25-րդ հոդվածը *(Պատասխանատվությունը և Փոխհատուցումը)* կիրառվում է համապատասխանաբար:

## ՀՈԴՎԱԾ 20. Հետ գանձումը

20.1. Բանկի կողմից Դրամաշնորհը չհիմնավորված չափով հատկացվելու կամ հետ գանձումը սույն Համաձայնագրին համապատասխան այլ կերպ հիմնավորվելու դեպքում, այդ թվում՝ 9-րդ հոդվածի *(Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը)* 4-րդ և 5-րդ մասերին համապատասխան ներկայացված ծախսերի ստուգման հաշվետվություն ներկայացնելուց հետո կամ 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* 8-րդ մասի կամ 15-րդ հոդվածի *(Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները)* համաձայն իրականացված ստուգումների, հսկողության կամ աուդիտների արդյունքում, Դրամաշնորհի շահառուն Բանկին հետ է վճարում այդ գումարները այդպիսի հետվճարում պահանջող դեբետային ավիզոն Բանկից ստանալուց հետո՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում: Բանկի պահանջած այդ գումարները Դրամաշնորհի շահառուն Բանկի կողմից ներկայացված գրավոր պահանջում նշված հաշվեհամարին է վճարում եվրոյով՝ Դրամաշնորհի շահառուին Բանկի կողմից նախնական վճարում

կատարելու ժամանակ կիրառված Տարադրամի փոխարժեքից անկախ:

Որևէ կասկածի տեղիք չտալու նպատակով Բանկը, մասնավորապես, կարող է կատարել իր կողմից 7-րդ հոդվածի *(Դրամաշնորհի վճարումը)* համաձայն հատկացված ցանկացած գումարի հետ գանձումը, որը գերազանցել է Դրամաշնորհի շահառուի կողմից կրած՝ 8-րդ հոդվածին *(Թույլատրելի ծախսերը)* համապատասխան սահմանված թույլատրելի ծախսերի վերջնական գումարը:

20.2. Դրամաշնորհի շահառուի կողմից մարման ենթակա ընդհանուր գումարի վերաբերյալ Բանկի կողմից ներկայացված գրավոր պահանջը, բացառությամբ առերևույթ սխալի առկայության դեպքի, համարվում է համոզիչ ապացույց վճարման ենթակա գումարի, բանկի կողմից կատարվող ցանկացած գանձման, Բանկին վճարման ենթակա գումարների հետ վճարման նպատակով Դրամաշնորհի շահառուի կողմից արտարժույթի փոխանակման համար կրած ծախսերի կամ կորստի կամ Դրամաշնորհի շահառուի կողմից ցանկացած դեպքում վճարվող այլ հարկերի վերաբերյալ:

20.3. Չսահմանափակելով Կողմերի՝ մասնաբաժիններով մարումներ կատարելուն համաձայնություն տալու իրավունքները և Դրամաշնորհի շահառուի կողմից գումարը ժամանակին հետ չվճարվելու դեպքում՝ վճարման վերջնաժամկետ համարվող ամսվա առաջին օրը վճարման ենթակա գումարի վրա հաշվեգրվում է տոկոս՝ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից իր հիմնական վերաֆինանսավորման գործառնությունների նկատմամբ՝ Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրի «C» շարքում հրապարակված կարգով կիրառվող տոկոսադրույքով՝ այն ավելացնելով երեք ու կես տոկոսով: Տոկոսագումարը ենթակա է վճարման հետ վճարման ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից մինչև վճարման օրն (ներառյալ) ընկած ժամանակահատվածի համար: Ցանկացած մասնակի վճարմամբ պետք է առաջինը մարվի տոկոսը:

## ՀՈԴՎԱԾ 21. Փոփոխությունները

21.1. Սույն Համաձայնագրի, այդ թվում՝ դրա հավելվածների ցանկացած փոփոխություն պետք է գրավոր սահմանվի Կողմերի ստորագրած փաստաթղթում և ուժի մեջ մտնի համապատասխան փոփոխության վերաբերյալ համաձայնագրում նշված պայմաններով: 21-րդ հոդվածի *(Փոփոխությունները)* համաձայն կատարված փոփոխությունների վերաբերյալ դրույթները գերակայում են, և դրանց նախապատվություն է տրվում սույն Համաձայնագրի միայն այն որոշակի դրույթների նկատմամբ, որոնք հստակ փոփոխվել են այդ դրույթներով:

21.2. Չի թույլատրվում որևէ փոփոխություն կատարել, եթե դրա նպատակը կամ հետևանքը սույն Համաձայնագրում այնպիսի փոփոխություն կատարելն է, որով կասկածի տակ կդրվի Դրամաշնորհ տրամադրելու հարցը:

21.3. Հասցեի կամ կոնտակտային տվյալների փոփոխության վերաբերյալ կարելի է պարզապես գրավոր ծանուցել մյուս Կողմերին 26-րդ հոդվածին *(Ծանուցումները և այլ հաղորդակցություն)* համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 22. Իրավունքների շնորհումը

22.1. Որևէ Կողմ չի կարող երրորդ կողմի իրավունք շնորհել կամ փոխանցել կամ այլ կերպ իրականացնել կամ կատարել սույն Համաձայնագրով նախատեսված իր իրավունքներն ու պարտավորությունները՝ առանց մյուս Կողմի նախապես տված գրավոր համաձայնության:

22.2. Որպես վերոնշյալից բացառություն՝ Բանկը կարող է սեփական հայեցողությամբ Եվրոպական հանձնաժողովին շնորհել անհիմն հատկացված Դրամաշնորհի գումարները հետ գանձելու իրավունք:

## ՀՈԴՎԱԾ 23. Դադարեցումը

23.1. Եթե Կողմը կարծում է, որ Համաձայնագրի արդյունավետ և պատշաճ կատարումն այլևս հնարավոր չէ, ապա վերջինս այդ հարցի շուրջ խորհրդակցում է մյուս Կողմի հետ: Որևէ լուծման շուրջ համաձայնության չգալու դեպքում Կողմը կարող է դադարեցնել Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմերին վաթսուն (60) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում տրամադրելով և չսահմանափակելով սույն Համաձայնագրի մյուս Կողմերի այլ իրավունքներ ու լիազորություններ:

23.2. Եթե որևէ պատճառով Պատվիրակման համաձայնագիրը կամ Ֆինանսավորման պայմանագիրը դադարեցվում է կամ անվավեր է դառնում, կորցնում է ուժը, կամ դադարեցվում է դրա գործողությունը, ապա Բանկը Դրամաշնորհի շահառուին երեսուն (30) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում հանձնելուց հետո առանց որևէ պատասխանատվություն կրելու իրեն իրավունք է վերապահում դադարեցնելու սույն Համաձայնագիրը և Դրամաշնորհի շահառուին տեղեկացնելու այդ դադարեցման ժամկետների մասին:

23.3. Դադարեցման՝ սույն Համաձայնագրով նախատեսված որևէ այլ պատճառից բացի՝ Բանկը կարող է Դրամաշնորհի շահառուին տասնհինգ (15) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում հանձնելուց հետո առանց որևէ պատասխանատվություն կրելու դադարեցնել սույն Համաձայնագիրը, եթե ստեղծվել է հետևյալ իրավիճակներից որևէ մեկը.

ա) Դրամաշնորհի շահառուն կամ Շահագործողը առանց Բանկի համար ընդունելի հիմնավորման չի կատարում իր վրա դրված պարտավորություններից որևէ մեկը և այդ պարտավորությունները կատարելու վերաբերյալ գրավոր ծանուցում ստանալուց հետո կրկին չի կատարում դրանք կամ այդպիսի ծանուցում ստանալուց հետո՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում, համապատասխան բացատրություններ չի տրամադրում.

բ) Դրամաշնորհի շահառուն, Շահագործողը կամ Դրամաշնորհի շահառուին ներկայացնելու, նրա առնչությամբ որոշումներ կայացնելու կամ հսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող որևէ անձ կատարում է մասնագիտական վարվելակերպի կանոնների լուրջ խախտում կամ մեղավոր է ճանաչվում դա կատարելու համար կամ մասնագիտական վարվելակերպին առնչվող որևէ իրավախախտման մասով հարուցված վարույթում է ներգրավված կամ կատարել է խարդախություն, ներգրավված է եղել կոռուպցիայի կամ հանցավոր համագործակցության, Փողերի լվացման, Ահաբեկչության ֆինանսավորման կամ Եվրոպական միության ֆինանսական շահերին վնասող որևէ այլ անօրինական գործողության մեջ, կամ նրա մասով առկա են հանցավոր համագործակցության, խարդախության, Արգելված վարքագծի, Փողերի լվացման կամ Ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ մեղադրանքներ (բացառությամբ այն մեղադրանքների, որոնք Բանկի հիմնավոր կարծիքի համաձայն անհիմն են կամ վրդովեցնող).

գ) Դրամաշնորհի շահառուն կամ Շահագործողը կեղծ հաշվետվություններ է ներկայացնում կամ նյութական բնույթի կեղծ կամ թերի հայտարարություններ է կատարում.

դ) Դրամաշնորհի շահառուն կամ Շահագործողը ենթարկվում են իրավական, ֆինանսական, տեխնիկական կամ կազմակերպական փոփոխությունների, որոնք կարող են սույն Համաձայնագրի վրա զգալի ազդեցություն գործել կամ կասկածի տակ դնել Եվրոպական միության՝ Դրամաշնորհ տրամադրելու որոշումը.

ե) Դրամաշնորհի շահառուն չի վարում 8-րդ հոդվածի *(Թույլատրելի ծախսերը)* 3-րդ մասում նշված Հաշվետվությունները:

23.4. 23-րդ հոդվածին *(Դադարեցումը)* համապատասխան Համաձայնագրի գործողությունը դադարեցնելուց հետո Դրամաշնորհի շահառուն առանց

անհարկի ուշացումների, անհապաղ և կանոնակարգված ձևով ձեռնարկում է աշխատանքներն ավարտելուն և հետագա ծախսերը նվազագույնի հասցնելուն ուղղված բոլոր քայլերը:

23.5. Չհակասելով 20-րդ հոդվածի *(Հեպ գանձումը)* 1-ին կետին և հաշվի առնելով 8-րդ հոդվածը *(Թույլատրելի ծախսերը)*՝ Դրամաշնորհի շահառուն իրավունք ունի մինչև դադարեցման ժամկետը կատարված աշխատանքների համար սույն Համաձայնագրին համապատասխան ստանալու Դրամաշնորհի միայն այն մասը, որը համապատասխանում է կրած ծախսերին՝ այսպիսով բացառելով ստանձնած այնպիսի պարտավորություններին առնչվող ծախսերը, որոնք պետք է կատարվեին դադարեցման այդ օրվանից հետո:

23.6. Չհակասելով 20-րդ հոդվածի *(Հեպ գանձումը)* 4-րդ կետին և հաշվի առնելով 23-րդ հոդվածի *(Դադարեցումը)* 4-րդ կետը՝ Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում, որի պատճառներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն վերագրվում Դրամաշնորհի շահառուին, Բանկը կարող է համաձայնել փոխհատուցել Դրամաշնորհի շահառուի կողմից ծանուցման ժամկետում կրած անխուսափելի և ողջամիտ թույլատրելի ծախսերը:

## ՀՈԴՎԱԾ 24. Գանձումները և ծախսերը

24.1. Դրամաշնորհի շահառուն Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարում է սույն Համաձայնագրի կատարումից կամ իրականացումից առաջացող հարկերը, տուրքերը, վճարները և ցանկացած տեսակի այլ վճարումներ, այդ թվում՝ դրոշմատուրքը և գրանցման վճարները:

## ՀՈԴՎԱԾ 25. Պատասխանատվությունը և փոխհատուցումը

25.1. Բանկը կամ Եվրոպական միությունը ոչ մի պարագայում կամ որևէ

պատճառով Պայմանագրերի կատարման ընթացքում, ոչ էլ որևէ Պայմանագրի հետևանքով չի կարող պատասխանատվություն կրել անձնակազմի կամ Դրամաշնորհի շահառուի կամ Շահագործողի կողմից պատճառված վնասների կամ Դրամաշնորհի շահառուի գույքի համար այն դեպքում, երբ այդ վնասն առաջացել է Կապալառուի որևէ գործողության կամ անգործության կամ էլ Կապալառուի կողմից համապատասխան Պայմանագրի համաձայն Աշխատանքները չկատարելու հետևանքով:

25.2. Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ կորստի կամ վնասի, այդ թվում՝ փաստաբանի ծառայությունների հետ կապված ողջամիտ վճարների և ծախսերի համար, որոնք կարող են առաջանալ սույն հոդվածի համաձայն իր գործողության կամ անգործության հետևանքով՝ բացառությամբ այն կորստի կամ վնասի, որը կարող է առաջանալ իր կոպիտ անփութության կամ կանխամտածված արարքների հետևանքով:

25.3. Դրամաշնորհի շահառուն ազատում է Բանկին ցանկացած պատասխանատվությունից և բոլոր այն պատասխանատվություններից, որոնք կարող են առաջանալ որևէ բողոքի կամ հայցի հետևանքով, որը ներկայացվել է Դրամաշնորհի շահառուի, Շահագործողի, դրա կապալառուների, աշխատակիցների կամ այն անհատների կողմից կիրառելի օրենքների, նորմերի կամ կանոնակարգերի խախտման դեպքում, որոնց համար պատասխանատվություն են կրում Դրամաշնորհի շահառուն, դրա կապալառուները կամ աշխատակիցները, կամ էլ երրորդ կողմի իրավունքների, այդ թվում՝ Մտավոր սեփականության իրավունքների խախտման դեպքում:

25.4. Չսահմանափակելով Բանկի՝ սույն Համաձայնագրով, Ֆինանսավորման պայմանագրով կամ ցանկացած կիրառելի օրենքով նախատեսված այլ իրավունքներ՝ Դրամաշնորհի շահառուն փոխհատուցում է Բանկին և ստանձնում ցանկացած և բոլոր այն հայցադիմումներից, պահանջներից, վնասներից, կորուստներից, ծախքերից և ծախսերից (այդ թվում՝

փաստաբանի ծառայությունների հետ կապված ողջամիտ վճարներից և ծախսերից) բխող կամ դրանց նկատմամբ, ինչպես նաև Բանկի ցանկացած այնպիսի պարտավորությունների նկատմամբ երաշխավորություն, որոնք կարող են առաջանալ Դրամաշնորհի շահառուի կամ Շահագործողի կողմից կատարված գործողության կամ անգործության կամ էլ Դրամաշնորհի շահառուի կամ Շահագործողի կողմից սույն Համաձայնագրով սահմանված պարտավորություններից որոշները չկատարելու հետևանքով:

## ՀՈԴՎԱԾ 26. Ծանուցումները և այլ հաղորդակցություններ

26.1. Սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվելիք ցանկացած ծանուցում կամ այլ հաղորդում պետք է իրականացվի գրավոր և պետք է պարունակի սույն Համաձայնագրի նույնականացման կոդը («*FI 91498*») և անվանումը *(Դրամաշնորհի համաձայնագիր - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ Ծրագիր)*:

26.2. Սույն Համաձայնագրի շրջանակներում կամ դրա առնչությամբ ցանկացած ծանուցում պետք է կատարվի անգլերենով: Սույն Համաձայնագրով նախատեսված կամ դրա առնչությամբ տրամադրվող մյուս բոլոր փաստաթղթերը պետք է լինեն անգլերեն, իսկ եթե անգլերեն չեն, ապա դրանց պետք է կցված լինի դրանց անգլերեն պաշտոնական թարգմանությունը, և այդ դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն թարգմանությանը՝ բացի այն դեպքերից, երբ տվյալ փաստաթուղթը սահմանադրական, օրենսդրական կամ այլ նմանատիպ պաշտոնական փաստաթուղթ է:

26.3. Բացառությամբ վարույթում գտնվող կամ հնարավոր դատավարության վերաբերյալ ծանուցումների, որոնք ստորև ներկայացված հասցեներին պետք է ուղարկվեն բացառապես փոստով՝ պաշտոնական նամակի միջոցով և ստացման հաստատմամբ՝ սույն Համաձայնագրի և Ծառայությունների

վերաբերյալ բոլոր ծանուցումները և նամակագրությունը պետք է իրականացվեն փոստով, ֆաքսով կամ, ըստ Կողմերի համաձայնության՝ գրավոր, էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցներով հետևյալ հասցեներին՝

Բանկի համար՝ Եվրոպական ներդրումային բանկ

98-100, Կոնրադ Ադենաուր զբոսայգի

L-2950, Լյուքսեմբուրգ

Ֆաքս՝ (+352) 43 79 66799

Ուշադրություն՝ Վարկային գործառնություններ ԵՄ հարևանության երկրներում, Հանրային սեկտորի արևելյան բաժին

Էլ.հասցե՝ ops-nc2-projects@eib.org

Դրամաշնորհի շահառուի համար՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Մելիք Ադամյան 1, Երևան 0010

Ֆաքս՝ +374(11)800132

Ուշադրություն՝

Միջազգային համագործակցությա վարչության պետ

Tel: +374(11)800333
Էլ.հասցե՝ icd@minfin.am

26.4. Վերոնշյալ կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխություն ուժի մեջ

կմտնի միայն մյուս Կողմին վերոնշյալ հասցեներով այդ մասին գրավոր թղթային կամ էլեկտրոնային փոստով ծանուցում ուղարկելուց հետո:

26.5. Ծանուցումները և այլ հաղորդակցություն համարվում են կատարված ստացող Կողմի կողմից դրանք ստանալուց հետո:

## ՀՈԴՎԱԾ 27. Կարգավորող օրենքը և վեճերի կարգավորումը

27.1. Սույն Համաձայնագիրը, դրա կազմումը, ձևակերպումն ու գործողությունը կարգավորվում են Լյուքսեմբուրգի օրենսդրությամբ:

27.2. Եվրոպական միության արդարադատության դատարանն ունի բացառիկ իրավազորություն կարգավորելու սույն Համաձայնագրից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ (այդ թվում՝ սույն Համաձայնագրի առկայության, վավերականության կամ դադարեցման կամ այն առոչինչ ճանաչելու հետևանքների հետ կապված վեճ) կամ սույն Համաձայնագրից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած ոչ պայմանագրային պարտավորություն:

27.3. Կողմերը համաձայնում են, որ Եվրոպական միության արդարադատության դատարանն ամենահամապատասխան ու ամենահարմար դատարանն է միմյանց միջև վեճերը կարգավորելու համար, ուստի որևէ առարկություն չեն ներկայացնի այդ առումով:

27.4. Կողմերը հետևաբար հրաժարվում են անձեռնմխելիությունից կամ Եվրոպական միության արդարադատության դատարանի իրավազորության վերաբերյալ առարկություն ներկայացնելու իրավունքից: Սույն Հոդվածի համաձայն՝ Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից կայացված ցանկացած որոշում վերջնական և պարտադիր է Կողմերից յուրաքանչյուրի համար՝ առանց որևէ սահմանափակման կամ վերապահման:

## ՀՈԴՎԱԾ 28. Իրավունքները պահպանելը

28.1. Բանկի կողմից սույն Համաձայնագրով սահմանված իր իրավունքներից որևէ մեկը չիրականացնելը կամ ուշացմամբ իրականացնելը չի համարվում այդ իրավունքից հրաժարում:

28.2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի համարվում Բանկին, նրա կառավարիչներին, տնօրեններին, տեղակալներին, պաշտոնատար անձանց, աշխատակիցներին կամ Բանկի համար առաջադրանքներ կատարող փորձագետներին վերապահված արտոնություններից, անձեռնմխելիությունից և հարկերից ազատվելուց ակնհայտ կամ ենթադրյալ հրաժարում:

## ՀՈԴՎԱԾ 29. Ամբողջական Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը Կողմերի միջև դրա կարգավորման առարկայի վերաբերյալ համաձայնության պայմանների ամբողջական և բացառիկ շարադրանքն է, որը փոխարինում է Կողմերի միջև նույն կարգավորման առարկայի վերաբերյալ բոլոր նախորդ համաձայնություններին:

## ՀՈԴՎԱԾ 30. Անվավեր ճանաչելը

Եթե սույն Համաձայնագրի որևէ դրույթ հակասում է օրենքին կամ կիրառելի չէ դատական վարույթում, ապա այդ դրույթը կհանվի և կլինի չգործող, իսկ, եթե սույն Համաձայնագրի հիմնական պայմանները, մասնավորապես՝ 4-րդ հոդվածը *(Աշխատանքների ֆինանսավորումը)*, 5-րդ հոդվածը *(Նախագծումը և գնումները)*, 6-րդ հոդվածը (*Պայմանագրերի փոփոխությունները*), 7-րդ հոդվածը *(Դրամաշնորհի վճարումը)*, 8-րդ հոդվածը *(Թույլատրելի ծախսերը)*, 9-րդ հոդվածը *(Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը)*, 10-րդ հոդվածի *(Արդյունքների նկատմամբ իրավունքները և մտավոր սեփականության*

*իրավունքները)* 3-րդ կետը, 11-րդ հոդվածի *(Տեսանելիությունը և թափանցիկությունը)* 1-ին կետը, 11-րդ հոդվածի *(Տեսանելիությունը և թափանցիկությունը)* 5-րդ կետը, 15-րդ հոդվածը *(Ստուգումները, հսկողությունն ու աուդիտները)*, 20-րդ հոդվածը *(Հետ գանձումը)*, 23-րդ հոդվածը *(Դադարեցումը)*, 25-րդ հոդվածը *(Պատասխանատվությունը և պաշտպանությունը)*, 27-րդ հոդվածը (*Կարգավորող օրենքը և վեճերի կարգավորումը*) և 28-րդ հոդվածի (*Իրավունքները պահպանելը*) 2-րդ կետը շարունակեն լինել օրինական և կատարման ենթակա, ապա սույն Համաձայնագրի մյուս մասերը Կողմերի համար կլինեն գործող և պարտադիր:

**Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝** սույն Համաձայնագրի Կողմերո իրենց անունից ստորագրելու համար կազմեցին սույն Համաձայնագիրը չորս (4) բնօրինակից՝ անգլերենով (յուրաքանչյուր էջ անվանատառերով նշագրվեց յուրաքանչյուր Կողմի ներկայացուցչի կողմից), որից 2-ը (երկու)՝ Բանկի համար, և 2-ը (երկու)՝ Դրամաշնորհի շահառուի համար:

Երևան, 27.11.2019թ.

Լյուքսեմբուրգ, 4.12.2019թ.

| | |
|---|---|
| Ստորագրվել է<br>Հայաստանի Հանրապետության<br>կողմից և անունից | Ստորագրվել է<br>ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ կողմից<br>և անունից |
| _____ | _____ _____ |
| Ատոմ Ջանջուղազյան | Լիոնել Ռապել Կինգա Սոլտեզ |
| Ֆինանսների նախարար | Բաժնի պետ Գլխավոր իրավական<br>խորհրդատու |

## Հավելված 1. Ծրագրի նկարագրությունը

**Հիմնավորում**

Տրանսպորտի ոլորտը կարևոր դեր ունի Հայաստանի ազգային տնտեսության մեջ, որը կաշկանդված է աշխարհագրական և միջազգային քաղաքականությամբ :

Հայաստանը Հարավային Կովկասում տեղակայված, դեպի ծով ելք չունեցող երկիր է, որի տնտեսությունը մեծապես կախված է տրանսպորտից և միջսահմանային մատչելիությունից: Ճանապարհային ցանցը հիմք է ծառայում երկրի տնտեսության զարգացման համար՝ ապահովելով հաղորդակցություն երկրի ներսում, հարևան երկրների և մայրցամաքային Ասիայի ու Եվրոպայի հետ:

Ներկայումս տրանսպորտի ենթակառուցվածքն էական մարտահրավերների առջև է կանգնած.

- Ադրբեջանի հետ Հայաստանի արևելյան սահմանը փակ է 1991 թվականից, իսկ Թուրքիայի հետ արևմտյան սահմանը՝ 1993 թվականից ի վեր:
- Հաղորդակցությունն ու արտաքին առևտուրն իրականացվում են հյուսիսից և հարավից՝ համապատասխանաբար Վրաստանի կամ Իրանի միջոցով:
- Երկրի հիմնական միջանցքներն այժմ գտնվում են անբարենպաստ պայմաններում:
- Հայաստանն ունի խիստ մայրցամաքային կլիմա. ձմեռն աչքի է ընկնում շատ ցածր ջերմաստիճանով և ձնառատությամբ, որոնք սահմանափակում են տնտեսական գործունեությունը:

Այս խնդիրների հետևանքով առաջանում են տրանսպորտային մեծ ծախսեր, ինչն ուղղակիորեն ազդում է ապրանքների առևտրի վրա, ինչպես նաև մեծ գումարներ են պահանջվում ենթակառուցվածքների զարգացման ու պահպանման

համար: Հայաստանի ճանապարհային ենթակառուցվածքները դեռևս պատշաճ կերպով չեն արձագանքում տնտեսության պահանջներին:

Այս համատեքստում Շահագործողը Բանկի հետ միասին և Հանձնաժողովի հետ սերտ համագործակցությամբ նպատակ ունի Հայաստանի և Վրաստանի միջև հաստատել ավելի լավ և առավել կայուն տրանսպորտային փոխհաղորդակցություն, բարելավել Հայաստանի ճանապարհային համակարգը և ընդհանուր ճանապարհային անվտանգությունը, նպաստել տնտեսական աճին՝ Վրաստանի և այլ երկրների հետ առևտրի ծավալների մեծացման միջոցով, նվազեցնել գյուղական աղքատությունը և այլն: Որդեգրվել է միասնական մոտեցում. Հայաստանի ճանապարհային ցանցը դիտարկվել է որպես մեկ փոքր համակարգ, որն աջակցության կարիք ունի: Համակարգի մեջ ներառվել են Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը (որը բարելավվում է առանձին), Մ6 միջանցքը և մի քանի կապող ճանապարհներ՝ որոշ հայտնի վտանգավոր կետերում:

Անվտանգության խնդիրը դիտարկվում է որպես հիմնական խնդիր և հրատապ առաջնահերթություն Հայաստանի ճանապարհային անվտանգության 5 տարվա (2017-2021թթ.) ազգային ծրագրով, որով սահմանված են իրատեսական թիրախներ ու համապատասխան միջամտություններ: Հայաստանում ճանապարհային անվտանգությունը բարելավելու համար առկա է հստակ և բարձր մակարդակի քաղաքական աջակցություն՝ ճանապարհային անվտանգության եվրոպական չափանիշներին հասնելու ձգտումով:

Մահվան ելքով ճանապարհային պատահարների ցուցանիշն է մոտավորապես 18 այդպիսի պատահար յուրաքանչյուր 100 000 բնակչի հաշվով (2013), որը երեք անգամ բարձր է ԵՄ միջին ցուցանիշից, այն է՝ 5 այդպիսի պատահար յուրաքանչյուր 100 000 բնակչի հաշվով (2015):

Հայաստանի՝ համապետական և տեղական նշանակության ճանապարհների մեծ մասի անվտանգության կառավարումը և չափանիշները դեռևս բարելավման

կարիք ունեն, քանի որ դրանք ցածր են գնահատվում միջազգային չափանիշներով և շարունակում են է՛լ ավելի վատթարանալ: Հայաստանում միջքաղաքային ճանապարհների նախագծման չափանիշները պետք է արդիականացվեն ճանապարհային անվտանգությունը բարելավելու համար: Դեռևս Խորհրդային Միության ժամանակ ձևավորված չափանիշները շարունակում են մասամբ կիրառվել Հայաստանում և չեն պարունակում անվտանգության մասով պատշաճ պահանջներ: Անվտանգ նախագծի տեսանկյունից ամենամեծ բացը երթևեկության գոտիների, բաժանարար գոտիների և բաժանարար գոտիներում պատնեշների լայնությունն է:

Միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ընթացիկ ծրագրերում մեծ ուշադրություն է դարձվել անվտանգության հարցին, և դրանք անդրադարձել են կամ կանդրադառնան երկրում մի քանի հիմնական վտանգավոր կետերի, որտեղ պատահարներ են տեղի ունենում: Այնուամենայնիվ, առկա է նաև ճանապարհային անվտանգության ավելի լավ համակարգման և կառավարման, երթևեկության շատ ավելի խիստ վերահսկողության, երթևեկության մասնակիցների ավելի մեծ իրազեկվածության, ինչպես նաև պատահարների դեպքում ավելի արագ արձագանքման անհրաժեշտություն: Չնայած այն փաստին, որ Հայաստանը ճանապարհների անվտանգության բարելավմանն ուղղված զգալի ջանքեր է ներդնում, զոհվածների և վիրավորների թիվը դեռևս մնում է անընդունելի բարձր:

Հաշվի առնելով պատահարների սոցիալական և տնտեսական ծանր հետևանքները՝ կառավարությունը մշակել է Համաշխարհային բանկի (**ՀԲ**) աջակցությամբ խնդիրը լուծելու ռազմավարություն: Կառավարությունը 2009 թվականի օգոստոսին ընդունել է Հայաստանի և Երևան քաղաքի ճանապարհային անվտանգության ազգային առաջին ռազմավարությունը և հինգ տարվա գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ **Գործողությունների ծրագիր**)՝ մահվան ելքով ճանապարհային պատահարների թիվը 5 տարվա ընթացքում 10 տոկոսով նվազեցնելու նպատակով:

Գործողությունների ծրագրով սահմանվում են այն ձեռնարկվելիք քայլերը կամ այն գործողությունները, որոնք պետք է լավ կատարվեն, որպեսզի ռազմավարությունը հաջողության հասնի: Գործողությունների ծրագիրը պարունակում է հետևյալ տարրերը. ստեղծել Հայաստանի Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ, քարտուղարություն և աշխատանքային խմբեր, ապահովել ճանապարհային անվտանգության համար հատուկ ֆինանսավորում, մշակել ճանապարհային անվտանգության վերաբերյալ տվյալների ազգային ինտեգրված բազա, ամրապնդել ճանապարհային ոստիկանության կարողությունները, խթանել ճանապարհային անվտանգության տեխնիկական որակը, բարելավել ճանապարհային անվտանգության մշակույթը, խթանել ամրագոտիների օգտագործումը, բարձրացնել արագության գերազանցման վերահսկման մակարդակը, ինչպես նաև ապահովել ալկոհոլին առնչվող նորմերի կատարումը:

Մինչ աստիճանաբար իրականացվում են Գործողությունների ծրագրի որոշ տարրեր, և 2009 թվականի Գործողությունների ծրագրի՝ մահվան ելքով ճանապարհային պատահարների թիվը կրճատելու նպատակին հաջողվել է հասնել, այնուամենայնիվ երկրում մահվան և վնասվածքների թիվը դեռևս բարձր է: Հետևաբար Գործողությունների ծրագիրը 2016 թվականին արդիականացվել է Շահագործողի կողմից (2017-2021 թվականների գործողությունների հնգամյա ծրագիր):

Հայկական պետության բյուջեի սահմանափակ հնարավորությունների պատճառով սահմանափակ են նաև այն ռեսուրսները, որոնք կառավարությունը կարող է հատկացնել արդիականացված Գործողությունների ծրագրի իրականացման համար: Հետևաբար Բանկը և Շահագործողը Հանձնաժողովի հետ սերտ համագործակցությամբ միասին գնահատել են, թե հնարավոր տարբերակներից որը կլինի ճանապարհային անվտանգության, ճանապարհային չափանիշների և կարողությունների զարգացման տեսանկյունից լավագույն ծրագիրը:

Նախագծի անբաժանելի մասն են կազմում Մ6 մայրուղու վրա, ինչպես նաև

երկրի ամբողջ տարածքում ճանապարհային անվտանգության հետ կապված իրականացվելիք միջոցառումները:

**Ծրագիրը**

Հայաստանի ճանապարհային ցանցը կարող է դիտարկվել որպես լավ ինտեգրված փոքր համակարգ, որն ունի աջակցության կարիք. համակարգը ներառում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը (ՀՀՃՄ-ն բարելավվում է առանձին), Մ6 միջանցքը և մի քանի կապող ճանապարհներ:

Ծրագիրը Բանկի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ծրագրի մաս է կազմում և նպատակ ունի Հայաստանի ճանապարհային ցանցի բարելավման միջոցով նպաստել տարածաշրջանային փոխհաղորդակցությանը:

Մասնավորապես, Ծրագիրը նպատակ ունի նվազեցնել ճանապարհային տրանսպորտի հետ կապված պատահարների, վնասվածքների և մահվան ելքով դեպքերի ցուցանիշները՝ (i) Մ6 ճանապարհի և (ii) երկրում մի քանի այլ ճանապարհների (հատկապես՝ Մ5, Մ4 և Մ2 ճանապարհների, որոնցով երթևեկությունը ծանրաբեռնված է) ֆիզիկական բարելավման աշխատանքների, ինչպես նաև «փափուկ միջոցների» միջոցով:

Անվտանգության բարելավման առաջարկված միջոցառումները ներառում են հետևյալը (սակայն չեն սահմանափակվում դրանցով). Երթևեկության հանդարտացում, բարելավված հետիոտնային նոր անցումներ, ճանապարհային ցանկապատ և բաժանարար գոտիների տեղադրում, ճանապարհների երկրաչափական պարամետրերի թեթև բարելավում և վերահարթեցում, խաչմերուկների ավելի լավ կարգավորում, բարելավված ճանապարհային գծանշումներ (այդ թվում՝ թափառքի և դանդաղեցման գոտիների պատշաճ գծանշում), նոր ճանապարհային նշաններ և այլն:

**Նպատակները**

Ծրագրի ընդհանուր նպատակն է բարելավել տարածաշրջանային փոխհաղորդակցությունը Հայաստանի տրանսպորտային ցանցի կատարելագործման և մասնավորապես՝ ճանապարհային անվտանգության հետ կապված միջոցառումների, ինչպես նաև համապատասխան մարմինների և շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացման միջոցով՝ ճանապարհային անվտանգության միջազգային չափանիշներին հասնելու նպատակով:

Ծրագրի կոնկրետ նպատակները հետևյալն են՝

ա) տարածաշրջանային, հանրապետական և միջպետական ճանապարհների ցանցում նախանշված և տեխնիկական աջակցությամբ նախանշվելիք հատվածներում ու կետերում ճանապարհային անվտանգության բարելավում,

բ) Հայաստանի ճանապարհների նախագծման չափանիշների և ընթացակարգերի վերանայում՝ դրանք ճանապարհային անվտանգության վերաբերյալ ԵՄ հրահանգին և ճանապարհային անվտանգության բնագավառում միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու նպատակով,

գ) պլանավորմամբ/նախագծմամբ զբաղվող հիմնական հաստատություններում ճանապարհային անվտանգության մասով աուդիտորական կարողությունների ավելացում,

դ) ճանապարհային անվտանգության մասին իրազեկվածության բարձրացում և երթևեկության մասնակիցների, հատկապես խոցելի մասնակիցների վարքագծի բարելավում, և

ե) ճանապարհային անվտանգության ոլորտում հետագա ներդրումների պարզում:

Կողմերը համարում են, որ Ծրագիրն ամբողջովին համապատասխանում է Հայաստանի ճանապարհային անվտանգության 5 տարվա (2017-2021թթ.) ազգային ռազմավարությանը և սատարում է ԵՀ/ԱԳԵԾ աշխատակազմի համատեղ

աշխատանքային փաստաթղթի (Արևելյան գործընկերություն (ԱրԳ) նպատակները՝ շեշտը դնելով հիմնական առաջնահերթությունների և արդյունքների վրա, 2016թ. դեկտեմբեր):

**Ծրագրի բաղադրիչները**

Ծրագիրը բաղկացած է հետևյալ հինգ բաղադրիչներից.

**Բաղադրիչ I.** Ճանապարհային անվտանգության հետ կապված միջոցառումներ Մ6 միջպետական ճանապարհի վրա,

**Բաղադրիչ II.** Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում Հ-8 հանրապետական ճանապարհի և Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի հետ սահման միջպետական ճանապարհի վրա նախանշված 9 վտանգավոր կետերում՝ մանրամասն նկարագրված Հավելված 1բ-ում *(Ներդրումային դրամաշնորհի հնարավորության գործառնական ուղեցույց)*,

**Բաղադրիչ III.** Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում հետևյալ միջպետական ճանապարհների վրա նախանշված 15 վտանգավոր կետերում՝ Մ-2 Երևան-Արարատ-Կապան-Մեղրի, Մ-4 Երևան-Հրազդան-Սևան-Ազատամուտ, Մ-12 Գորիս և Մ-17 Կապան-Շիկահող-Մեղրի,

**Բաղադրիչ IV.** Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում լրացուցիչ պարզված վտանգավոր կետերում,

**Բաղադրիչ V.** Տեխնիկական աջակցություն: Նախատեսված են հետևյալ գործողությունները.

- Ճանապարհային անվտանգության աուդիտներ և ստուգումներ, ինչպես նաև ամբողջ երկրում տարածաշրջանային և միջպետական ճանապարհների ընդգրկում՝ ցանցում ճանապարհային

անվտանգության բնագավառում անհրաժեշտ լրացուցիչ ներդրումները պարզելու նպատակով: IV բաղադրիչի տակ ներառման ենթակա ներդրումներին առաջնահերթության հաղորդում,

- Առկա նախագծի վերանայում II բաղադրիչի համար և մանրամասն նախագծի մշակում III և IV բաղադրիչների համար,
- Աշխատանքների տեխնիկական վերահսկում II, III և IV բաղադրիչների համար,
- Ճանապարհային անվտանգության աուդիտորների վերապատրաստում,
- Հայաստանի ճանապարհների նախագծման չափանիշների և ընթացակարգերի վերանայում՝ դրանք ճանապարհային անվտանգության ԵՄ և միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու նպատակով,
- Ճանապարհային անվտանգության ոլորտում հետագա ներդրումների պարզում:

V բաղադրիչի իրագործման նպատակով Ծրագրի համար անհրաժեշտ Տեխնիկական աջակցության համար պահանջվում է բազմապրոֆիլ և փորձառու փորձագետների խումբ, որոնք կարող են տրամադրել պահանջվող բոլոր ծառայությունները: Փորձագետների թիմը ղեկավարելու և տեղական փորձագետների և շահառուների ներկայացուցիչների ու այլ շահագրգիռ անձանց հետ պատշաճ համագործակցություն ապահովելու նպատակով կպահանջվի ծրագրի ղեկավար:

**Ծրագրի իրականացման ժամանակացույցը**

| | |
|---|---|
| Շահառուի հետ վարկային համաձայնագրերի ստորագրման ամսաթվերը՝<br>➢ ԵՆԲ<br>➢ ԱԶԲ | 2016 թվականի հունվարի 29<br>2016 թվականի նոյեմբերի 9 |
| ԵՆԲ-ի հետ ԵՄ Պատվիրակման համաձայնագիրը ստորագրելու նպատակային ամսաթիվը | 2017 թվականի չորրորդ եռամսյակ |
| Շահառուի հետ Դրամաշնորհի համաձայնագիրը և Համագործակցության համաձայնագիրը ստորագրելու նպատակային ամսաթիվը | 2019 թվականի երկրորդ կիսամյակ |
| ԵՄ ներդրումների շրջանակներում ֆինանսավորվող գործողությունների սկիզբը | 2019 թվական |
| ԵՄ ներդրումների շրջանակներում ֆինանսավորվող գործողությունների ավարտը | 2022 թվական |

## Հավելված 2. Աշխատանքների գնահատված ծախսերը

Ծրագրի ակնկալվող ծախսերի (առանց ԱԱՀ-ի) բաշխումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

**Ծրագրի ներդրումների շրջանակներում ծախսերը**

| **Միավոր** | **Ծախսերի նախահաշիվ (միլիոն եվրո)** |
|---|---|
| **ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի միջոցներով ֆինանսավորվող բաղադրիչ՝ Բաղադրիչ I. Մ6 միջպետական ճանապարհի վրա ճանապարհային անվտանգության հետ կապված միջոցառումներ,** այդ թվում՝ | **17.76** |
| Մ6 ճանապարհի վրա ճանապարհային անվտանգության հետ կապված միջոցառումներ | 4.21 |
| Մ6 ճանապարհի վրա քարերի անկումից պաշտպանություն | 9.68 |
| Մ6-ի վրա գտնվող թունելներ, որոնք չեն համապատասխանում չափանիշներին (երթևեկության և անվտանգության տեսանկյունից խոչընդոտներ ստեղծելով) | 3.87 |
| **ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող բաղադրիչ՝ Բաղադրիչներ II, III և IV. ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքների, ենթակառուցվածքների բարելավման և տեխնիկական աջակցության բաղադրիչներ,** այդ թվում՝ | **4.25** |
| Բաղադրիչ II. Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում Հ-8 հանրապետական ճանապարհի եւ Մ-5 Երևան-Արմավիր- | 1.25 |

| | |
|---|---|
| Թուրքիայի հետ սահման միջպետական ճանապարհի վրա նախանշված 9 վտանգավոր կետերում | |
| Բաղադրիչ III. Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում հետևյալ միջպետական ճանապարհների վրա նախանշված 15 վտանգավոր կետերում՝ Մ-2 Երևան-Արարատ-Կապան-Մեղրի, Մ-4 Երևան-Հրազդան-Սևան-Ազատամուտ, Մ-12 Գորիս և Մ-17 Կապան-Շիկահող-Մեղրի, | 1.55 |
| Բաղադրիչ IV. Ճանապարհային անվտանգության հետ կապված աշխատանքներ և ենթակառուցվածքների բարելավում լրացուցիչ պարզված վտանգավոր կետերում, | 1.45 |
| **ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Տեխնիկական աջակցության բաղադրիչ՝ Բաղադրիչ V,** այդ թվում՝ | **0.65** |
| Ճանապարհային անվտանգության հետագա բարելավումների պարզում | 0.05 |
| Ճանապարհային անվտանգության աուդիտներ և ստուգումներ | 0.10 |
| Առկա նախագծի վերանայում II բաղադրիչի համար և մանրամասն նախագծի մշակում III և IV բաղադրիչների համար | 0.10 |
| Աշխատանքների տեխնիկական վերահսկում | 0.15 |
| Ճանապարհային անվտանգության աուդիտորների վերապատրաստում | 0.05 |
| Հայաստանի ճանապարհների նախագծման չափանիշների և ընթացակարգերի վերանայում՝ դրանք ճանապարհային անվտանգության ԵՄ և միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու նպատակով | 0.20 |

| | |
|---|---|
| **ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող այլ գործողություններ** | **0.25** |
| Հաղորդակցություն | 0.20 |
| Հատուկ աուդիտներ | 0.05 |
| **Ամբողջ Ծրագիրը** | **22.91** |

Ծրագրի **ֆինանսավորման սխեման** հետևյալն է.

| **Աղբյուրը՝** | **Գումարը (մլն եվրո)** |
|---|---|
| Բանկի վարկ և ԱՋԲ-ի վարկ | 17.76 |
| ԵՄ ներդրումներ | 5.15 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **22.91** |

## Հավելված 3. Ֆինանսական նույնականացման ձև

| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ |
|---|

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
http://ec.europa.eu/budget/contracts_grants/info_PRIVACY STATEMENT contracts/financial_id/financial_id_en.cfm#en

Խնդրում ենք հայտը լրացնել ԼԱՏԻՆԱԿԱՆ ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ

| ԲԱՆԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ (1) | |
|---|---|
| ՀԱՇՎԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (2) | |
| IBAN/ՀԱՇՎԵՀԱՄԱՐԸ (3) | |
| ԱՐԺՈՒՅԹԸ՝ | |
| BIC (SWIFT) ԿՈԴԸ | ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈԴԸ (4) |
| ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | |
| ԲԱՆԿԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՆ | |
| ՓՈՂՈՑԸ ԵՎ ՀԱՄԱՐԸ | |
| ՔԱՂԱՔԸ | ՓՈՍՏԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ |
| ԵՐԿԻՐԸ | |

| ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ՀԱՇՎԵՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ | |
|---|---|
| ՀԱՇՎԵՏԵՐԸ | |
| ՓՈՂՈՑԸ ԵՎ ՀԱՄԱՐԸ | |
| ՔԱՂԱՔԸ | ՓՈՍՏԱՅԻՆ ԻՆԴԵՔՍԸ |
| ԵՐԿԻՐԸ | |

| ՆՇՈՒՄ | |
|---|---|

| ԲԱՆԿԻ ԿՆԻՔԸ + ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (5) | ԱՄՍԱԹԻՎԸ (պարտադիր է) |
|---|---|
| | ՀԱՇՎԵՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (պարտադիր է) |

1) **Մուտքագրել վերջնական ստացող բանկի տվյալները և ոչ թե միջնորդ բանկի տվյալները:**

2) **Սա չի վերաբերում հաշվի տեսակին: Հաշվի անվանումը սովորաբար հաշվետիրոջ անունն է: Այնուամենայնիվ, հաշվետիրոջ ցանկությամբ կարող է բանկային հաշվին մեկ այլ անվանում տրված լինել:**

3) **Լրացնել IBAN կոդը (Միջազգային բանկային հաշվի համարը), եթե դա գործում է այն երկրում, որտեղ հիմնադրված է ձեր բանկը:**

4) **Կիրառելի է միայն ԱՄՆ-ի (ABA կոդ), Ավստրալիայի և Նոր Զելանդիայի (BSB կոդ) և Կանադայի (Transit կոդ) դեպքում: Չի կիրառվում այլ երկրների դեպքում:**

5) **Նախընտրելի է կցել բանկային ՎԵՐՋԻՆ քաղվածքի կրկնօրինակը: Խնդրում ենք հաշվի առնել, որ բանկային քաղվածքով պետք է հաստատվեն այն բոլոր տեղեկությունները, որոնք թվարկված են վերևում՝ «ՀԱՇՎԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ», «ՀԱՇՎԵՀԱՄԱՐԸ/IBAN» և «ԲԱՆԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ»: Կցված քաղվածքում չեն պահանջվում բանկի կնիքը և բանկի ներկայացուցչի ստորագրությունը: Հաշվետիրոջ ստորագրությունը և ամսաթիվը ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ պարտադիր են:**

Ֆինանսական նույնականացման օրինակելի ձևը խմբագրվելու հնարավորությամբ հասանելի է հետևյալ հասցեով՝

http://ec.europa.eu/europeaid/prag/annexes.do?annexName=E3f&lang=en

## Հավելված 4. Վճարման պահանջագրի օրինակելի ձև

**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**

**[ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՇԱՀԱՌՈՒԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱԹՂԹԻ ՎՐԱ]**

[***Վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը***]

Ուղղված՝ [***Բանկի կողմից նշանակված կոնտակտային անձի անունը և վարչությունը***]

Առարկան՝ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ [●]՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ծրագրի վերաբերյալ դրամաշնորհի համաձայնագիր»

Վճարման պահանջագրի համարը [●].

Վճարման պահանջագրով ծածկվող ժամանակահատվածը՝ [●]

Հարգելի Պարոն/Տիկին,

Մենք հղում ենք կատարում չակերտներում նշված Դրամաշնորհի համաձայնագրին: Համաձայնագրի 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն՝ սույնով խնդրում եմ տրամադրել վերը նշված Համաձայնագրի շրջանակներում թիվ [●] վճարումը, որով ծածկվելու են ակնկալվող [ ]-ից [ ]-ն ընկած ժամանակահատվածում հանձնվելիք աշխատանքների ծախսերը:

Պահանջվող գումարը [եվրո] է

Կից ներկայացվում են հետևյալ օժանդակ փաստաթղթերը՝

- [Ծառայություն մատուցողի անվանումը]-ի կողմից [ ] ամսաթվին տրված հաշիվ ապրանքագիր թիվ [●]

- [7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) համաձայն պահանջված ցանկացած այլ փաստաթուղթ]

Վճարումը պետք է կատարվի հետևյալ բանկային հաշվին՝...[1]

Սույնով հավաստում ենք, որ սույն վճարման պահանջագրում և կից ներկայացված օժանդակ փաստաթղթերում առկա տեղեկություններն ամբողջական են, հավաստի և ճիշտ, որ կրած ծախսերը կարող են համարվել թույլատրելի՝ սույն Համաձայնագրին և Պայմանագրերին համապատասխան, և որ սույն վճարման պահանջագիրը հիմնավորված է համապատասխան օժանդակ փաստաթղթերով, որոնք կարող են ստուգվել:

Հավաստում ենք նաև, որ Համաձայնագրի 7-րդ հոդվածի (*Դրամաշնորհի վճարումը*) 3-րդ մասում նշված պայմանները շարունակում են բավարարված լինել:

[*Վերջին փրանշի վճարման պահանջագրի դեպքում.* Պարտավորվում ենք Կատարման ժամանակահատվածի ավարտից հետո՝ երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում, Բանկին տրամադրել բոլոր օժանդակ ապացույցներն ու փաստաթղթերը, որոնցով հիմնավորվում են սույն վճարման պահանջագրով ծածկվող ծախսերի չափը և թույլատրելիությունը՝ Դրամաշնորհի վերջնական չափը պարզելու նպատակով:]

Հարգանքով՝

[ստորագրություն]

***

[1] Ֆինանսական նույնականացման ձևում նշված հաշվեհամարը: Բանկային հաշվի փոփոխման դեպքում պետք է կցել ճշգրտված Ֆինանսական նույնականացման ձևը:

## Հավելված 5. Հաշվետվությունները

8-րդ հոդվածի (*Թույլատրելի ծախսերը*) 3-րդ կետի առնչությամբ Հաշվետվությունները պետք է համապատասխան դեպքերում ներառեն՝

1) 9-րդ հոդվածի (Տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնելը) 2-րդ կետում նշված միջանկյալ հաշվետվությունները և վերջնական հաշվետվությունը

2) Դրամաշնորհի շահառուի հաշվապահական համակարգից հաշվապահական հաշվետվությունները (համակարգչայնացված կամ ձեռքով կազմված), ինչպիսիք են՝ գլխավոր հաշվառման մատյանը, ենթամատյանները և աշխատավարձերի հաշիվները, հիմնական միջոցների գրանցամատյանները և այլ վերաբերելի հաշվապահական տեղեկություններ,

3) Իրականացված գնումների ընթացակարգերի մասով ապացույցները, ինչպիսիք են մրցութային փաստաթղթերը, մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված առաջարկները և գնահատման հաշվետվությունները, այդ թվում՝ 5-րդ հոդվածին (Նախագծումը և գնումները) համապատասխան պահանջվող՝ Բանկի կողմից առարկություններ չլինելը կամ համաձայնություն տալը հաստատող ցանկացած ապացույց,

4) Իրավական պարտավորությունների մասով ապացույցները, ինչպես օրինակ՝ Պայմանագրերը,

5) Աշխատանքների հանձնման մասով ապացուցները, ինչպիսիք են՝ հաստատված հաշվետվությունները, ժամանակացույցները, ուղետոմսերը, սեմինարներին, համաժողովներին և վերապատրաստման դասընթացներին հաճախելու ապացույցները (այդ թվում՝ վերաբերելի փաստաթղթեր, ձեռք բերված նյութեր, վկայականներ) և այլն,

6) Գնումների մասով ապացույցները, ինչպիսիք են՝ հաշիվ-ապրանքագրերը և ստացականները,

7) Վճարման ապացույցները, ինչպիսիք են՝ բանկային հաշվետվությունները, դեբետային ավիզոն, Կապալառուի կողմից վճարումն ընդունելու մասին ապացույցը,

8) Ապացույցներ առ այն, որ վճարված հարկերը և/կամ ԱԱՀ-ն փաստացիորեն չեն կարող հետ պահանջվել:

Բոլոր հաշվետվությունները պետք է ներկայացվեն կամ բնօրինակով, այդ թվում՝ էլեկտրոնային ձևով, կամ հաստատված պատճեններով: